Azg
Հայկական օրաթերթ
16 ՅՈՒՆՈՒԱՐ 1998 ՈՒՐԲԱԹ # 4 (1507)

Իրանի միջնորդությունը ողջունելի, բայց անկարելի՞ է

Մեր երեկվա համարում «Նոյյան տապան» գործակալության լրատվությամբ արձագանել էինք թուրքական «Ջումհուրիեթ» թերթի հրապարակած տեղեկատվությանը, թե Հայաստանի արտգործնախարար Ալեքսանդր Արզումանյանը ՀՀ-ում Իրանի դեսպան Նիֆար Էսֆահանիի հետ վերջերս ունեցած զրույցի ընթացքում իբր «խնդրել է Իրանին միջնորդի դեր կատարել ղարաբաղյան հարցում», վստահեցնելով, որ նման միջնորդությունը «գոհունակությամբ կընդունվի թե՛ Հայաստանի եւ թե՛ Ադրբեջանի կողմից»: Երեկ, անուղղակիորեն անդրադառնալով այդ լուրին, ՀՀ արտգործնախարարության խոսնակ Արսեն Գասպարյանը հայտարարեց, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման միակ ֆորումը հանդիսանում է ԵԱՀԿ Մինսկի գործընթացը, 1995 թ. Բուդապեշտում կայացած եվրոպայի Անվտանգության կազմակերպության նախարարների խորհրդի իսկ որոշմամբ: Հետեւաբար, ավելացրեց ԱԳՆ խոսնակը, այդ հակամարտությունը պետք է կարգավորվի ԵԱՀԿ Մինսկի գործընթացի հովանու ներքո:

Իսկ ինչ վերաբերում է Իրանի միջնորդության հնարավորությանը, որն Գասպարյանն ասաց, «Ինչ վերաբերում է առանձին պետությունների, այդ թվում նաեւ Իրանի ջանքերին, որոնք կարող են նպաստել հակամարտության կողմերի միջեւ փոխադարձ վստահությանն ուղղված ամրապնդման միջոցառումներին, ապա դրանք կողջունվեն Հայաստանի կողմից»:

ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ

Ապագա աշխարհում Հայաստանի տեղը՝ Եվրոպա

Հարցազրույց ՀՀ արտաքին գործերի նախարարի առաջին տեղակալ Վարդան Օսկանյանի հետ

Կարեւորագույն հարց է բարձրացվում ստորեւ հրատարակվող հարցազրույցում՝ ո՞րն է լինելու Հայաստանի տեղը ապագա աշխարհում: Ազգմավարական բնույթի հարց, որը ցավալիորեն անտեսվում էր ցայժմ. Հայաստանը նմանեցնելով մի մանուկի, որ ճանապարհներ խաչմերուկի վրա կանգնած սպասում է, թե ով իրեն կորդեգրի ու տուն կտանի: Իսկ հիմա, երբ սկսել ենք պատկերացնել մեր բնական տեղն աշխարհում, մեծ աշխատանք ու տքնանք է սպասում մեզ այդ վայրում հաստատվելու համար:

– Պրն Օսկանյան, հունվարի 12-ին տեղի ունեցավ «Եվրոպական ինտեգրացման եւ եվրոպական տարածաշրջանային կազմակերպությունների հետ համագործակցության հարցերի Հայաստանի միջգերատեսչական հանձնաժողովի» անդրանիկ նիստը: Ինչո՞վ էր պայմանավորված նման հանձնաժողովի ստեղծումը եւ ի՞նչ նպատակներ է հետապնդում: Եվ, ընդհանրապես, ինչպիսի՞ վիճակում է եւ ի՞նչ է այսօր իրենից ներկայացնում Հայաստանի եվրոպական քաղաքականությունը:

– Իրոք, ժամանակ առ ժամանակ լսարան է թվալ, որ եվրոպական ուղղությունը Հայաստանը արտաքին քաղաքականության մեջ թե տեսականորեն եւ թե գործնականում գրեթե ծեւավորված չէ, որ բացակայում են նպատակները եւ դրանց կենսագործման հստակ ծեւակերպումները, որ կոնցեպտուալ դրույթները կրում են պատահական եւ դեկլարատիվ բնույթ: Աշխատանքը եվրոպական ուղղությամբ, իհարկե, տարվում էր, սակայն շատ դեպքերում մեր ենթայաբար, առանց լուրջ ուսումնասիրության եւ համակարգման: Ցավոք, այդ իրավիճակն աննկատ չմնաց նաեւ եվրոպական մեր գործընկերներից, որոնք զարմանքով արձանագրում էին մեր նահանջը նախկին առաջատար դիրքերից: Պատճառները մի քանիսն են, եւ ներքին, եւ արտաքին: Դրանք անմիջականորեն կապված են այն բոլոր իրադարձությունների հետ, որոնք տեղի ունեցան վերջին երկու տարիներին եւ Հայաստանում, եւ Հայաստանի սահմաններից դուրս: Եվրոպայի հետ քաղաքական երկխոսությանը չի նպաստում նաեւ ղարաբաղյան հիմնահարցի կարգավորման ներկա վիճակը: Եվ, ի վերջո, իսկապես, մենք ինքներս նոր ենք կողմնորոշվում այդ հարցում: Թեեւ տարբեր առիթներով եւ աստիճանաբար սակայնապես բայց միեւնույն է խոսվել է եվրոպական Հայաստանի ինտեգրացման մասին, որպես արտաքին քաղաքականության առաջնայնություն, այնուամենայնիվ, պարզված չէր, թե իրականում ինչ ուղիներով է դա կատարվելու եւ ինչպես է դա կենսագործվելու:

Տես էջ 3

ԵՐԵՎԱՆ

Սգո երթ Բաքվի ջարդերի տարելիցին

ԵՐԵՎԱՆ, 15 ՀՈՒՆՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հունվարի 15-ին «Ի պատիվ հանրության ԼՂՀ-ի» համահայկական համաժողովի կազմկոմիտեի եւ Հայ յեղափոխական դաշնակցության նախաձեռնությամբ կայացավ սգո երթ՝ ի հիշատակ 1990 թ.-ի Բաքվի ջարդերի: Մասնակիցների թվում էին մի շարք հասարակական-քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչներ, մտավորականներ:

Բաքվի իրադարձությունները միանշանակ գնահատելով որպես ցեղասպանություն՝ Հայաստանի դեմոկրատական կուսակցության (ՀԴԿ) նախագահ Արամ Սարգսյանը հայտարարեց, որ Հայաստանի իշխանությունների մեղքով է, որ այն չունեցավ համապատասխան հնչեղություն: ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմնի կազմակերպական ներկայացուցիչ Հրայր Կարապետյանի կարծիքով, հայության գլխին այսօր նույնպես կախված է ցեղասպանության վտանգը: Ըստ նրա, անհրաժեշտ է միշտ զգոն լինել եւ ի լուր աշխարհի հայտարարել, որ հայությունը տեր է իր ժողովրդի բոլոր հատվածներին, իսկ հասցված վերքերը չեն լավանա, քանի դեռ հանցագործները չեն պատժվել: Հ. Կարապետյանը արձանագրեց, որ այս հարցում եւս Հայաստանի իշխանությունները հստակ վերաբերմունք չունեն եւ դրանով է բացատրվում, որ նրանց ներկայացուցիչները չեն մասնակցում երթին:

Հայ ժողովրդին վշտակցելու էին եկել նաեւ Հայաստանում ԻԻՀ դեսպանատան ներկայացուցիչները: Դեսպանատան երկրորդ քարտուղար Ալի Քազիզադեն լրագրողների հետ զրույցում նշեց, որ իրենց պարտքն էին համարում գալ եւ հարգել զոհերի հիշատակը:

Ա. Սարգսյանը «Նոյյան տապանի» թղթակցին տեղեկացրեց, որ Համաժողովի կազմկոմիտեն եւ ՀՅԴ-ն նախատեսում են անցկացնել միջոցառումներ՝ շարք նվիրված 1988-90 թվականներին Ադրբեջանում կոտորված անմեղ հայերի հիշատակին, ինչպես նաեւ արցախյան շարժման 10-ամյակին:

ՀԱՍԱՐՈՍ

ԵԱՀԿ նոր նախագահը կուժեղացնի կարգավորման միջոցները

15 ՀՈՒՆՎԱՐ, «ԱՅՍՏՈՒԹՅՈՒՆ»: ԵԱՀԿ նոր նախագահը հայտարարեց, որ ձգտելու է ուժեղացնել հակամարտությունների կանխարգելմանն ուղղված միջոցները: Լեհաստանի արտգործնախարար Վլադիսլավ Գերեմեկը, որն այսօր Վիեննայում ստանձնեց ԵԱՀԿ մեկամյա նախագահությունն, ասաց, որ հակամարտությունների կանխարգելման հարցերը պետք է առանցքային դառնան 54 անդամ երկրներ ունեցող այդ կազմակերպության գործունեության մեջ: Նրա կարծիքով, Սերբիայի Կոսովոյի նահանգը եւ Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ պայքարը Լեռնային Ղարաբաղի համար ապագայում կարող են խնդիրներ հարուցել:

ԼՂՀ նախագահն ընդունեց ԵԱՀԿ ներկայացուցչին

Հունվարի 14-ին ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանը ընդունեց ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկին (Լեհաստանի ԱԳՆ): Տեղի ունեցավ մտքերի փոխանակում բանակցային գործընթացում ստեղծված ներկա իրավիճակի եւ ծգնաժամից դուրս գալու ուղիների մասին: Նույն օրը Անջեյ Կասպրշիկը հանդիպեց ԼՂՀ ԱԳ նախարար Նաիրա Մելքումյանի հետ: Զրույցի ընթացում քննարկվեցին ղարաբաղյան հակամարտության կարգավորման հեռանկարները՝ վերջերս Կոպենհագենում տեղի ունեցած ԵԱՀԿ անդամ երկրների արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարների հանդիպման համատեքստում: ԵԱՀԿ նախագահի ներկայացուցիչն ընդունեց, որ միջնորդները ընթանալով են մոտենում ԼՂՀ-ի մտահոգությանը սեփական անվտանգության վերաբերյալ եւ արտահայտվեց հակամարտ կողմերի միջեւ վստահության միջոցառումների ամրապնդման օգտին: Վ. Ա.

Սերբերով բնակեցված Արեւելյան Սլավոնիան հանձնվեց Խորվաթիային

15 ՀՈՒՆՎԱՐ, BBC: ՄԱԿ-ը անցկացրեց Արեւելյան Սլավոնիայի հանձնման արարողությունը Խորվաթիայի իրավասության ներքո: Հիշեցնենք, որ Խորվաթիան կորցրել էր Արեւելյան Սլավոնիան խորվաթական սերբերի հետ ունեցած պատերազմից հետո, սակայն հետո կարողացել էր վերադարձել: Մինչ այսօր այդ տարածքը գտնվում էր ՄԱԿ-ի հովանու ներքո: Հանձնման արարողությունը տեղի ունեցավ Վուկովար քաղաքից ոչ հեռու: Այդ քաղաքը 91 թ. կատաղի մարտերի կենտրոնն էր: Խորվաթիայի ներկայացուցիչն ասաց, որ Արեւելյան Սլավոնիայի վերադարձը հաղթանակ է առանց արյունահեղության: Սակայն խորվաթական սերբերի ներկայացուցիչը հայտարարեց, որ իր ժողովրդին անորոշության ժամանակաշրջան է սպասում:

ԹՈՒՐՔԻԱ

Հեյդար Ալիեւի դեմ հեղաշրջման փորձերը Մոսկվայից են ղեկավարվել

Վերահսկիչ խորհրդի նախագահի զեկույցը վարչապետին

ԲԱՔՈՒ, 15 ՀՈՒՆՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Վարչապետին առընթեր Թուրքիայի վերահսկիչ խորհրդի նախագահ Կուսլու Սավաշի զեկույցը, որ պատրաստվում էր 5 ամիս շարունակ գաղտնի տվյալների հիման վրա, հանձնվել է թուրքական կառավարության ղեկավար Մեսութ Յըլմազին:

Ինչպես հաղորդում է ANS-press գործակալությունը, վկայակոչելով հավաստի աղբյուրներ, փաստաթղթում խոսվում է հանցագործ խմբերի հետ թուրքական պետական ասպիճանավորների կապերի եւ այլ երկրների ներքին գործերին նրանց միջամտության մասին: Այսպես, հայտնի է դարձել, որ Հեյդար Ալիեւին գահընկեց անելու նպատակով Ադրբեջանում պետական հեղաշրջման փորձի մեջ ներգրավված են եղել բարձրաստիճան պաշտոնյաներ: Մեկ օրինակից պատրաստված զեկույցը հաստատում է նաեւ, որ հատուկ կապի արբանյակային հեռախոսը գլխավոր «դավադիր» Ռովշան Ջավադովին (1994 թ մարտի 13-17-ի իրադարձություններ) ուղարկվել է թուրքական մայրաքաղաքից:

Այդ նույն աղբյուրի համաձայն, Ադրբեջանում հեղաշրջման փորձը, որին Անկարան բացահայտ «եղբայրական հանդարտություն» է անվանում, ձեռնարկվել է 1994 թվականի մարտին, երբ Թուրքիայի վարչապետը «երկաթե լեդի» Թանսու Չիլլերն էր: Մարտի սկզբին պաշտոնական այցով Դանիայում գտնվող Հ. Ալիեւին անսպասելիորեն զանգահարում է Թուրքիայի նախագահ Դեմիրելը եւ խնդրում շտապ վերադառնալ Բաքու: Հ. Ալիեւը, իմանալով, որ իր դեմ մահափորձ է պատրաստվում, ձեռնարկում է հարկ եղած հակամիջոցները:

Թուրքական մամուլը բազմիցս գրել է Թուրքիայի պատմության մեջ ամենախոշոր քաղաքական սկանդալի «Սուսուրլուկի գործի», որ բռնկվել էր 1996 թվականի նոյեմբերին, եւ այն ղեկավարության հետ, որ խաղացել է Թ. Չիլլերը այդ գործում, Ադրբեջանում հեղաշրջման փորձի փոխշաղկապվածության մասին: 1993-95 թվականներին, գլխավորելով երկրի նախարարների կաբինետը, Թ. Չիլլերը կառավարության գաղտնի հիմնադրամից 50 մլն դոլար է հատկացրել մինչեւ օրս համառորեն թաքցվող նպատակների համար: «Եթե ես մանրամասներ հայտնեմ, հարեւան երկրներում ցնցումներ կծագեն եւ Թուրքիան կխորտակվի...», մեկ անգամ չէ, որ հայտարարել է «երկաթե լեդին»: Սավաշի զեկույցը վկայում է, որ ծախսված միջոցներից 45 մլն ԱՄՆ դոլարը ընդհանրապես որեւէ փաստաթղթում չի երեւում, այդ թվում եւ գաղտնի ֆոնդի փաստաթղթերում:

«Սուսուրլուկի գործի» մասին հայտնի դարձավ Թուրքիայի արեւմուտքում Սուսուրլուկ քաղաքի մոտ տեղի ունեցած ավտոաղետից հետո, երբ զրահապատ «Մերսեդեսը» ավտոմայրուղում բախվել էր բեռնատարի: Այս վթարը կարող էր շարքային ճանապարհատրանսպորտային պատահար դառնալ, եթե լիմուզինում չգտնվեին Չիլլերի գլխավորած «ճշմարիտ ուղի» կուսակցությունից խորհրդարանի պատգամավոր Սեդաթ Բուջաքը, հատուկ ծառայությունների պետ, ԱՍՍԼԱ-ի մարտիկներ հետապնդող մաֆիոզ խմբավորման պարագլուխ Աբդուլլահ Չաթլին, որի հետախուզություն էր հայտարարել «Ինտերպոլը», եւ նրա սիրուհին: Երկրային կենտրոնամետ կառավարությունը, Յըլմազի գլխավորությամբ, հայտարարեց, որ այդ գործի հետաքննությունը իր պատվի գործն է:

Զեկույցի գլխավոր եզրակացությունն է իրավապահ մարմինների թուրքական համակարգի շուտափույթ վերակազմակերպում եւ հատուկ ծառայությունների մարում այն անձանցից, ովքեր խառն են «կեղտոտ գործերի» մեջ: Արդյոք ունկնդիր կլինի՞ դրան վարչապետը:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՊՄԲԱԳԻԿ

ԲԱՑ ՆԱՄԱԿ

«Իշխանությունները խախտում են մարդու իրավունքների հռչակագիրը»

Ապարդի անվ. իրավապաշտպանության հայկական հիմնադրամը, հանձին Լեւոն Ներսիսյանի, «Հանրապետության կիսաքաղ ժողովրդի անունից ընդհակալություն հայտնելով ժողովրդին մատուցված հեռամանորյա «օրեր. նվերի հացի բանկացման եւ «օդից» (օդային բյեկտիվ հնարավորությունների շրջանակներում», շարունակում է իրավապաշտպանը ոչեական այրերի «հասկանալի եւ գովելի» մտահոգությունն առաջարկելով սեւեռել 1994 թ. սեփականաշնորհված ավելի քան 1250 ձեռնարկություններից եւ մասնավորեցված 6021 «փոքր» օբյեկտներից գանձվող հարբոլժանձնակազմի խնամակալության տակ են, հանրակրթական դպրոցների ուսուցիչներն իրենց չնչին աշխատավարձով կերակրում են աղքատ ընտանիքների երեխաներին: Այս տոնական օրերին «Անտուն ծերունիներ շրջում են փողոցներով, ամաչելով ողորմություն խնդրելուց», ասվում է նամակում, նոպտրանսպորտից) օգտվելու սահմանված տուրքի համար, բաց նամակ է հղել ՀՀ կառավարությանը եւ Ազգային ժողովին, ուր, մասնավորապես ենթադրություն է հայտնվում, թե վերոհիշյալ ասյաններում ժողովրդի կենսամակարդակի մասին դատում են իրենց մտերիմների եւ հարազատների կենսաթոշակների դայմաններից ելնելով՝ այլապես անհասկանալի համարելով «մեր ժողովրդի մեծամասնության համար կործանարար հացի բանկացման» առթիվ առկա լռությունը: (Մեր կարծիքով, սակայն, լռությունն ավելի քան հասկանալի է. սեփական թանին թթու ասելը ժամանակի ոգով չէ-Լ. Պ.):

Նամակում մասնավորապես ասվում է. «Խնդրում ենք տարական հաշվարկ կատարել եւ դարգել, թե ինչպես կարելի է գոյատեւել 3000 դրամ միջին կենսաթոշակի եւ 5000 դրամ միջին աշխատավարձի դայմաններում, վճարելով ամենօրյա հացի, էլեկտրաէներգիայի եւ կոմունալ-կենցաղային ծառայությունների դիմաց (համարձակվում ենք «հուզել», սվերային գործունեության, դարտքերի, հարազատների հաշվին-Լ. Պ.): Աշ բյուջետային, [illegible] եւ տնտեսական հարցերի հանձնաժողովի նախագահ Մրն Եղիազարյանն, արդարացնելով նոր տուրքերի հաշվին բյուջեի դակասի լրացման այս «համարձակ եւ առաջադիմական» քայլը, վկայակոչում է այլ երկրներում գոյություն ունեցող համանման հարկերը՝ 20-50 ԱՄՆ դոլարի չափով, դիտավորյալ լռության մատնելով այն փաստը, որ այդ երկրներում թոշակառուները դատկառելի թոշակ են ստանում, աշխատունակ բնակչությունը դրսում աշխատանք չի փնտրում, իսկ այդ երկրների բյուջեն ձեւավորվում է տվյալ երկրի օբյեկտիվ հնարավորությունների շրջանակներում», շարունակում է իրավապաշտպանը դեսական այրերի «հասկանալի եւ գովելի» մտահոգությունն առաջարկելով սեւեռել 1994 թ. սեփականաշնորհված ավելի քան 1250 ձեռնարկություններից եւ մասնավորեցված 6021 «փոքր» օբյեկտներից գանձվող հարկերի վրա: «Հանուն լուսավոր ապագայի» ձեր վարչական եւ օրինաստեղծ գործունեության ընթացքում դուք կտրում եք այն ճյուղը, որի վրա նստած եք», նախազգուշացնում է հեղինակը եւ նշում, որ նախագահի ամանորյա ելույթում հնչած հավաստիացումը, թե «Հայաստանն արդեն հաղթահարել է արմատական եւ հիվանդագին վերափոխումների տագնապներն ու ցնցումները...», հանրապետության բնակչության մեծամասնության «սեղմողակը» «էլ ավելի» ձգելու իրավունք չի տալիս, եւ «սոցիալական լարվածության բացակայությունը» դեռեւս համընդհանուր ծաղկում չի նշանակում:

«Մարդիկ կիսաքաղց են, անգամ սոված: Փախստականների հոծ բնակավայրերում մեր ընչազուրկ հայրենակիցները չունեն աշխատանք եւ հաց, նրանց ցուրտ բնակավայրերն ամիսներով հոսանքազրկված են, երեխաները դպրոց չեն հաճախում, քանի որ կոշիկ եւ հագուստ չունեն, իսկ ծնողներն ի վիճակի չեն դասագրքեր եւ տետրեր գնելու: Կիսադատարկ հիվանդանոցներում «անտուն» հիվանդները տակով՝ հիշեցնել, որ վարչական եւ օրինաստեղծ գործունեության ընթացքում իշխանությունները «բազմիցս» խախտում են մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 22, 23, 24, 25, 26 եւ 28 հոդվածները», որի տակ ստորագրել է Հայաստանը: Հիշեցման կարգով վկայակոչելով 25-րդ հոդվածը՝ «Յուրաքանչյուր ոք ունի կենսամակարդակի իրավունք, որն իր եւ իր ընտանիքի համար ապահովի առողջություն ու բարեկեցություն, այդ թվում սնունդ, հագուստ, բնակարան ու բժշկական օգնություն, անհրաժեշտ սոցիալական ծառայություններ եւ ապահովագրության իրավունք գործազրկության, հիվանդության, հաշմանդամության, այրիության, ծերության եւ այն դեպքում, երբ գոյության միջոցների ձեռքբերումը չի դայմանավորված իրենից կախված հանգամանքներով»: Հիմնադրամի ներկայացուցիչը հույս է հայտնում, որ «ՀՀ նախագահը, իբրեւ Սահմանադրության երաշխավոր, միջոցներ կձեռնարկի սոցիալական արդարության ապահովման համար»:



ԱՄՆ

Կոնգրեսը հակաադրբեջանական օրենք է դատրաստում

ԲԱԲՈՒ, 15 ՅՈՒՆՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԹՈՒՐՔՍ: Անցյալ տարվա նոյեմբերին Միացյալ Նահանգների Կոնգրեսի 14 անդամ՝ կոնգրեսական Շերմանի գլխավորությամբ, օրենսդրական փոփոխություն մտցնելու նախագիծ են ներկայացրել Կոնգրեսի միջազգային հարաբերությունների հանձնաժողովին:

Վաշինգտոնում Թուրքաց գործակալության բդթակիցը հայտնում է, որ այդ օրենսդրական նախագիծն արդեն քննարկվել է եւ ակնկալվում է, որ հունվարի վերջին կքննարկվի Ներկայացուցիչների դալատում: Դատելով նախագծի բովանդակությունից, այն այս տարի լինելու է Ադրբեջանի արտաքին քաղաքականության լուրջ խնդիրներից մեկը:

Նախագծի երկրորդ մասում ասվում է, որ Ադրբեջանի կառավարությունը 1988 թվականին ագրեսիա է ձեռնարկել Լեռնային Ղարաբաղի բնակչության դեմ: Չնայած զինադադարը դահդանվում է, Ադրբեջանը շարունակում է Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի շրջափակումը:

«Ադրբեջանի կողմից ագրեսիայի վերսկսումը կարող է ապակայունացնել ողջ տարածաշրջանը, որը կարեւոր աշխարհաքաղաքական նշանակություն ունի ԱՄՆ-ի համար: Այն կարող է սպառնալ կովկասյան դետությունների անվտանգությանը եւ լուրջ խնդիրներ հարուցել տարածաշրջանի տնտեսական եւ քաղաքական զարգացման համար», նշվում է նախագծում: Նախագծի երրորդ մասում ասվում է, որ ԱՄՆ-ը ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի շրջանակներում անցկացվող բանակցություններում դետք է հանդես գա որպես անկախ միջնորդ: Միացյալ Նահանգները միաժամանակ դետք է նպաստի Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի միջեւ ուղղակի բանակցություններ սկսելուն: Միացյալ Նահանգները դետք է չեզոք դիրք բռնի կարգավիճակի եւ անվտանգության հարցերում:

Փաստաթուղթն առաջարկում է դատժամիջոցներ կիրառել ԱՄՆ-ի այն քաղաքացիների եւ ընկերությունների նկատմամբ, որոնք առեւտրական կամ տնտեսական կապեր ունեն Ադրբեջանի հետ՝ այն դեպքում, եթե Ադրբեջանը «ուժ գործադրի կամ սպառնա ուժ գործադրել Լեռնային Ղարաբաղի դեմ»: Միացյալ Նահանգների կառավարությունը կարող է արգելել դատպանական նշանակություն ունեցող ապրանքների եւ տեխնոլոգիաների մատակարարումը Ադրբեջանին: Բացի դրանից, Միացյալ Նահանգները վետո կդնի միջազգային ֆինանսական հատատությունների այն որոշումների վրա, որոնք կքննարկեն Ադրբեջանին ֆինանսական օգնություն տրամադրելու հարցեր:

ԼՂՀ

Հայ դասի գրասենյակ Ստեփանակերտում

Մոտ ժամանակներս Ստեփանակերտում տեղի կունենա Հայ դասի գրասենյակի դատշտոնական բացումը: Նորաստեղծ կազմակերդության գործունեությունը կղեկավարի ԼՂՀ նախկին Գերագույն խորհրդի նախկին փոխխոսնակ, ՀՅԴ անդամ Գեորգի Պետրոսյանը: Ներկայումս գրասենյակը զբաղված է մասնաշենքի վերանորոգմամբ: ԼՂՀ-ում Հայ դասի գրասենյակը մտադիր է սերտորեն համագործակցել շահագրգիռ բոլոր կառույցների, այդ թվում՝ ԼՂՀ զանգվածային լրատվամիջոցների հետ:

Ի նպաստ ծնելիության խթանման

ԼՂ Հանրապետությունում ծնելիությունը եւ բազմազավակությունը խթանելու նպատակով ԼՂՀ կառավարությունը իր վերջին նիստերից մեկում ընդունել է համապատասխան ծրագիր: ԼՂՀ փոխվարչապետ Ժիրայր Պողոսյանի մեկնաբանությամբ, բազմազավակության եւ ծնելիության խթանումն իշխանությունների քաղաքականությունը դետք է լինի: Ծրագրի մեջ նշված է, որ մի շարք ընտանիքների տրամադրվելիք գումարները կգոյանան կառավարության եւ բարեգործների հատկացրած միջոցներից: Ըստ փոխվարչապետի, օբյեկտիվ դատճառներով խանգարվել է բնակչության բնականոն աճը: Դրան գումարվել է սոցիալական լարվածությունը, որը ԼՂՀ-ն ժառանգել է խորհրդային ժամանակներից, ինչպես նաեւ հետպատերազմյան ժամանակաշրջանին հատուկ ցածր կենսամակարդակը: «Պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ այսօր մեր դետությունը ժողովրդի անվտանգությունը ապահովելու համար հարկադրված է հատկացնել իր տնտեսական հզորությանը անհարիր ֆինանսական միջոցներ», նշեց փոխվարչապետը: Հունվարի 1-ից սկսած ընտանիքում ծնված յուրաքանչյուր չորրորդ եւ հաջորդ երեխաների անունով ԼՂՀ ազգային բանկում կբացվի հաշիվ 1000 դոլարի չափով:

Վ. Ա.

Զբոսաշրջիկներին հրապուրելու համար դետք է շարժել միտքը

Անցած տարվա օգոստոսին ՀՀ արդյունաբերության եւ առեւտրի նախարարության ու ՄԱԿ-ի զարգացման ծրագրի գրասենյակի նախաձեռնությամբ Հայաստանում էին գտնվում Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության փորձագետները, որոնց երեքշաբաթյա ուսումնասիրությունների արդյունքում ստեղծվեց դոլորտի զարգացման միջոցառումների համալիր ծրագիր: Երկտարյա ժամանակահատված ընդգրկող այս նախագիծը, որ ներառում է կադրերի դատրաստման, դրակավորման բնագավառում աշխատատեղերի ստեղծման, մասնավոր դոլորտի կարողությունների ավելացման, իրավական դաշտի ձեւավորման եւ մի շարք այլ հարցեր, ներկայացվել է ՀՀ կառավարության ուշադրությանը, եւ արդեն իսկ դրա մասին տեղեկություններ են հաղորդվել աշխարհում բոլոր հնարավոր դոնոր կազմակերպություններին, դեսպանատներին:

Առաջինն արձագանքեց Ֆրանսիայի դեսպանությունը, եւ այս օրերին մեկեւաքսաքյա այցով Հայաստանում են գտնվում Ֆրանսիայի շինարարության ու տրանսպորտի նախարարության զբոսաշրջության դետական խորհրդի ներկայացուցիչ տիկին Միշել Զիվին եւ Զբոսաշրջության նախարարության միջազգային գործերի գրասենյակի աշխատակից դարոն Ֆրանսուա Ֆիլիպը: Նրանք չեն հասցրել այցելել հանրապետության տեսարժան վայրեր, քանի որ աշխատանքային խիստ կարճատեւ օրերը ծանրաբեռնված են եղել հանդիպումներով: Երեկ արդյունաբերության եւ առեւտրի նախարարությունում զբոսաշրջության գծով փոխնախարար Արա Պետրոսյանի, զբոսաշրջության բնագավառում դետական եւ մասնավոր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ կլոր սեղանի քննարկումներից հետո փորձագետները հանդիպում ունեցան լրագրողների հետ:

Ներգնա զբոսաշրջության դոլորտում աշխարհում առաջին տեղ գրավող Ֆրանսիայի մասնագետների բանիմացությունը թույլ է տալիս առաջարկել իրենց փորձն այլ երկրներում: Փորձագետները Հայաստանում ունեցած հանդիպումների ընթացքում ջանացել են դարզել դոլորտում առկա խնդիրները, եւ այսօր ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանատանը քննարկումներից հետո կհստակեցվի, թե ֆինանսական համապատասխան հնարավորությունների սահմաններում համագործակցության ինչպիսի կոնկրետ առաջարկներ կարվեն:

Համենայն դեպս, արդեն որոշակի է, որ ուսուցման, աշխատակիցների, զբոսաշրջության գործակալների դատրաստման աշխատանքները խիստ կարեւոր են հաջող մեկնարկի համար: Հենց այս նկատառումներով, թերեւս, փորձագետները հանդիպում են ունեցել նաեւ ՀՀ գիտության ու կրթության նախարարի հետ: Պրն Ֆիլիպը, որ միաժամանակ ՄԱԿ-ի փորձագետն է աշխարհի մի շարք երկրներում, շեշտը դնելով մարդկային ռեսուրսների զարգացման վրա, կարեւորեց նախատրամադրվածության հանգամանքը: Իսկ Հայաստանում իրենց առաքելության սկզբից ելնելով նրանք նկատում էին այդ յուրահատուկ տրամադրվածությունը, որ ողջունելի է: Ակնհայտ է, որ մեր հանրապետությունում մտահոգված են ստեղծելու աշխատակազմ, որը շատ թե քիչ հավասարվի Ֆրանսիայում գոյություն ունեցող մակարդակին: Հետաքրքրական է, որ այսօր աշխարհում տուրիզմի շնորհիվ 2,5 վայրկյանում ստեղծվում է մեկ աշխատատեղ: Անշուշտ, սա միեւնույնը չէ բոլոր երկրների համար, եւ երկրները, որ շահագրգիռ են զբոսաշրջության զարգացման խնդրում, կարող են լինել այդ շարքի վերեւում: Ի դեպ, մեր տարածաշրջանում համագործակցության շահագրգռություն հանդես է բերել միայն Հայաստանը: Զբոսաշրջությունը, դարզվում է, այսօր թիվ 1 ամենաեկամտաբեր արդյունաբերությունն է աշխարհում: Դրա զարգացման երկու անհրաժեշտ դայմաններ են հարկավոր. անվտանգությունը տարածաշրջանում եւ երկրում, ապա՝ դետական եւ մասնավոր դոլորտի տրամադրվածությունը: Զբոսաշրջության դոլորտում մեծ մրցակցություն գոյություն ունի, եւ դրն Ֆիլիպի խորհրդի համաձայն դետք է փնտրել եւ առաջարկել այնպիսի հրապուրանքներ, որը յուրահատուկ կլինի Հայաստանի համար: Օրինակ, կարելի է զարգացնել շախմատային մրցաշարերի անցկացման ավանդույթը, վերածվելով յուրօրինակ շախմատային կանոնի: Պրն Պետրոսյանն իր հերթին առանձնահատուկ գայթակղություններ շարքում փորձեց դասել հայկական հյուրասիրությունը, մեր բնության աննդարությունը: Նկատի ունենալով ներկա ժամանակներում բնապահպանական շարժման եւ էկոլոգիական մաքուր մթերքների նկատմամբ սրված հետաքրքրությունը, փոխնախարարը հնարավոր համարեց նաեւ այգեկութի սեզոնում տուրիզմի զարգացումը եւ այլն: Համենայն դեպս, այն հարցին, թե ի՞նչը Հայաստանում առաջնային գրավչություն ունի, նա դատասխանեց, որ այդդիսիք շարունակվում են մնալ մեր դատմամշակութային հուշարձանները:

Հետաքրքրական է, որ հիսունհազարանոց 1700-ամյակի տոնակատարությունների առթիվ Ֆրանսիացի հյուրերը լսել են ընդամենը այս օրերին: Նրանք կարեւորեցին փոխադարձ տեղեկատվության ապահովումը, եւ կոչ արեցին լրագրողներին միանալ այդ ընթացքին: Բերելով Ռումինիայում զբոսաշրջության մասին գրող լրագրողների միության օրինակը, նրանք առաջարկեցին, օգտագործելով արտասահմանցի գործընկերների հետ մեր կապերը, ներկայացնել սեփական երկիրը:

Կարծում ենք, այս հարցում մեր տեղական կազմակերդությունները նույնդես դիտի շահագրգիռ լինեն օգտվել լրագրողների ծառայություններից:

ԱՆՈՒՇ ԳԱԼՍՏՅԱՆ

■ *Ռուբեն Հակոբյանը կոչին ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմնի անդամ: Ինչպես հայտնի է, Ռ. Հակոբյանը ԳՄ-ի քաղաքական ներկայացուցչի դարտականություններից ազատվել էր իր դիմումի համաձայն: Սակայն ՀՅԴ Բյուրոն, չհամաձայնելով ԳՄ-ի որոշման հետ, դահանջել է, որ Ռուբիկ Հակոբյանի անդամությունը ԳՄ-ում վերականգնվի:*

ԵՏ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության է տալիս
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Տնօրէնութիւն / հեռ. 562863
Համակարգչային
ծառայութիւն / 581841
Apple Macintosh
հանձնարարյալ շարվածք
«Ազգ» թերթի
Ցղումը «Ազգին» դարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՈՄԲԱԳԻԿ

Սկիզբը էջ 1

Այդ իմաստով «Եվրոպական ինտեգրացման եւ եվրոպական տարածաշրջանային կազմակերպությունների հետ համագործակցության հարցերի Հայաստանի միջգերատեսչական հանձնաժողովի» ստեղծումը նախագահ Տեր-Պետրոսյանի հրամանագրով պետք է միանշանակորեն դիտել որպես եվրոպական ուղղությամբ լուրջ, նպատակասլաց եւ հետեւողական աշխատանքի հիմք: Այն ղեկավարվում է արտաքին գործերի նախարար Արզումանյանի կողմից՝ նպատակ ունենալով կանոնակարգել Եվրոպական միության, Եվրոպայի խորհրդի եւ այլ եվրոպական տարածաշրջանային կազմակերպություն-

Աղազա աշխարհում Հայաստանի տեղը՝ Եվրոպա

ների, ինչպես նաեւ առանձին եվրոպական երկրների հետ համագործակցությանն առնչվող գործադիր իշխանության մարմինների գործունեությունը: Թեեւ մենք այսօր դեռ հեռու ենք ԵՄ անդամակցության նույնիսկ թեկնածու լինելուց, սակայն նման մարմնի գործունեության արդյունավետությունը քայլ առ քայլ հնարավորություն կընձեռի մեզ ի վերջո հասնել նպատակին:

– Ի՞նչ պատկերացումներ ունեք մեր աղազա անելիքների եւ եվրոպական կոնցեպցիայի հիմնական դրույթների մասին:

– Նախ եւ առաջ, մենք պետք է վերջնականապես հստակեցնենք ինքներս մեզ համար՝ աղազա աշխարհում Հայաստանի տեղը: Թեեւ աշխարհագրական իմաստով Հայաստանը գտնվում է Արեւմուտքի եւ Արեւելքի սահմանագծին ու գիտական աշխարհագրական իմաստով կազմում է Փոքր Ասիայի կամ, ավելի լայն տոնտեքստով, Մերձավոր Արեւելքի մի մաս (ի դեպ նշեմ, որ աշխարհագրական իմաստով Ասիայում է գտնվում, օրինակ, նաեւ Իսպանիան), սակայն, քաղաքակրթական, մշակութային, պատմական, այսինքն՝ ազգի էությունը կազմող բոլոր հիմնական հատկանիշներով Հայաստանն, այնուամենայնիվ, պատկանում է Եվրոպային: Այսինքն, լինելով Արեւմուտքի եւ Արեւելքի սահմանագծին եւ ներառելով երկու քաղաքակրթությունների տարրերը, մենք, այնուամենայնիվ, գտնվում ենք սահմանի արեւմտյան կողմում: Երեւի հիշում եք այն երկար եւ ծանր քննարկումները Եվրոպայի խորհրդում, թե արդյո՞ք Հայաստանն ու Վրաստանը հանդիսանում են եվրոպական երկրներ, թե՝ ոչ: Այն ժամանակ, ընդ որում, հիմնականում բերելով քաղաքակրթական փաստարկներ, մեզ հաջողվեց համոզել եվրոպացիներին մեր եվրոպական լինելու մեջ, եւ որոշ ժամանակ անց Հայաստանը կովկասյան պետություններից առաջինն ստացավ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի հատուկ հրավիրյալի կարգավիճակ:

Մենք պետք է շատ համարձակորեն եւ աներկիբայորեն հայտարարենք, որ մեր արտաքին քաղաքականության գերագույն նպատակներից է Հայաստանի ինտեգրացումը եվրակառույցների մեջ եւ հատկապես աշխատենք այդ ուղղությամբ: Եվրոպական ինտեգրացման ճանապարհը չափազանց ծանր գործընթաց է եւ կարող է երկարել մի քանի տասնյակ տարիներով՝ շրջադարձ կատարելով ոչ միայն մեր տնտեսական, իրավական, քաղաքական, բնապահպանական եւ այլ ոլորտներում, այլեւ՝ փոխելով մարդկանց աշխարհայացքը, դաստիարակելով նրանց լինելու ոչ միայն իրենց պետության, այլեւ՝ միացյալ Եվրոպայի քաղաքացիներ: Այսօր մենք անում ենք առաջին քայլերը: Արդեն նշմարվում են Հայաստանի եվրոպական քաղաքականության աղազա ռազմավարության առաջին դրույթներն ու գաղափարները, մշակվում է կոնցեպցիան: Այս գործընթացը պետք է համաչափորեն զարգանա եւ՝ արտաքին, եւ՝ ներքին ասպարեզներում, լրացնելով իրար: Արտաքին գործոնը պետք է սնվի մեր ներքին կազմակերպվածությունից եւ փոփոխությունների գնալու պատրաստակամությունից, եւ փոխադարձաբար, ներքին կյանքը պետք է փոփոխվի արտաքինի ազդեցության տակ:

– Ինչպե՞ս եք իրականում պատկերացնում այդ ուղին:

– Արտաքին ճակատում եվրոպական ինտեգրացման գործընթացը Հայաստանի պարագայում պետք է ընթանա երկու հիմնական ուղղություններով.

- անմիջական ուղիղ բանակցությունների միջոցով՝ Եվրամիության եւ Եվրոպայի խորհրդի հետ, այսինքն՝ տնտեսական, իրավական եւ քաղաքական համակարգերի համապատասխանեցումը եվրոպական չափանիշներին, Եվրամիության հետ տարբեր համաձայնագրերի կնքումը՝ ապագայում ԵՄ ասոցիացված անդամի կարգավիճակ ձեռք բերելու ակնկալիքով. Հայաստանի նկատմամբ եվրոպական կառույցներում բարենպաստ եղանակի ստեղծումը եւ այլն:

- Երկրորդ. Հայաստանի ավելի ակտիվ եւ գործնական մասնակցությունը տարբեր տեսակի տարածաշրջանային նախաձեռնություններում, որոնք աջակցություն ունեն ԵՄ-ի կողմից եւ դիտվում են որպես եվրոպական չափանիշներին մոտենալու ուղղությամբ անհրաժեշտ անցումային փուլ: Հարեւան երկրների հետ ինտեգրացման փորձը, փոխադարձ աջակցությունը եւ օգնությունը զգալիորեն բարձրացնում են ԵՄ կազմում ընդգրկվելու հնարավորությունը, ինչի մասին շատ խոսուն վկայություն է վերջերս հրապարակված եվրոպական հանձնաժողովի կարծիքը Կենտրոնական եւ Հարավ-արեւելյան Եվրոպայի մի շարք երկրների վերաբերյալ:

– Այս երկրորդ մոտեցումը նորություն է եւ բավականին հետաքրքրական: Որքան հասկանում ենք, խոսքը գնում է, այսպես կոչված, եվրոռեգիոնալ քաղաքականության մասին, որը վերջին ժամանակներում հովանավորվում է Եվրամիության կողմից: Կարո՞ղ եք մանրամասնել:

– Ներկայումս Հայաստանն անդամակցում է նմանատիպ միայն մեկ տարածաշրջանային նախաձեռնությանը՝ Սեւծովյան տնտեսական համագործակցությանը: Թեեւ այդ համագործակցության իրական արդյունքները դեռ առջեւում են, ինչը կապված է անդամ-երկրների միջեւ լուրջ քաղաքական տարաձայնությունների առկայության հետ, սակայն վերջերս ՍՏՀ-ն ընկալվում է որպես եվրոպական ինտեգրացման ցանկալի անցումային փուլ: Համենայն դեպս, այդ է վկայում այդ կազմակերպության զգաստաժողովում վերջերս ընդունված հռչակագիրը: Սակայն սխալ կլիներ սահմանափակվել միայն մեկ տարածաշրջանային կազմակերպության մաս կազմելով, այն դեպքում, երբ ի հայտ են գալիս նոր հնարավորություններ եւ նախաձեռնություններ, ինչպիսիք են, օրինակ, Հարավ-արեւելյան Եվրոպայի պետությունների համագործակցությունը, Հարավ-արեւելյան Եվրոպայի համագործակցության նախաձեռնությունը (SECI), Եվրոպական միության Ռոյամոն նախաձեռնությունը: Տարածաշրջանային համագործակցության առումով հեռանկարային է մեզ համար նաեւ Եվրամիջերկրածովյան ուղղությունը, որն ընդգրկում է ոչ միայն Եվրոպայի հարավն ու հարավ-արեւելքը, այլեւ՝ Մերձավոր Արեւելքի եւ Հյուսիսային Աֆրիկայի միջերկրական երկրները:

Ի դեպ, նոր կերպարի (իմիջի) ստեղծումը, նոր աշխարհաքաղաքական գաղափարախոսության տարածումը մեծապես կօգնի Հայաստանի՝ որպես եվրոպական պետության ընկալմանը: Մենք պետք է ջանանք եվրոպացիների ընկալման մեջ ներկայացնել մեզ որպես սեւծովյան, հարավարեւելաեվրոպական, միջերկրածովյան երկիր: Համարելով Սեւ ծովը միակ բնական սահման Կովկասի եւ Բալկանների միջեւ, մենք պետք է զարգացնենք սահմանամերձ տարածաշրջանային համագործակցությունը, օգտագործելով եվրառեգիոնալ համագործակցության եռակողմ եւ բազմակողմ ձեւերը եւ մոդելները՝ լայն տարածում ստացած Կենտրոնական եւ Հարավ-արեւելյան Եվրոպայում: Այդ առումով չափազանց կարեւոր էին հանդիպումները Բուլղարիայի եւ Ռումինիայի մեր գործընկերների հետ, որոնց ընթացքում ներկայացվել են Հայաստան-Վրաստան-Բուլղարիա եւ Հայաստան-Վրաստան-Ռումինիա եռակողմ եվրառեգիոնալ համագործակցություն հաստատելու մեր առաջարկությունները: Ի դեպ, հեռագայում այդ համագործակցությունը կարող է ընդլայնվել մի կողմից Հունաստանի, մյուս կողմից՝ Հունգարիայի ուղղությամբ:

– Ձեր պատասխանից կարելի է եզրակացնել, որ տարածաշրջան հասկացողության մեջ Դուք ներդնում եք ավելի լայն իմաստ: Ինչպե՞ս են այնուամենայնիվ ընթանալու եվրաինտեգրացիոն գործընթացները մեր հարեւանների հետ, ԱՊՀ շրջանակներում:

– Մենք պետք է նոր որակական մակարդակի բարձրացնենք մեր հարաբերությունները հարեւան եւ բարեկամ Վրաստանի հետ, որը դեպի Եվրոպա տանող մեր հուսալի ճանապարհն է. պետք է ինտենսիֆիկացնենք եւ համակարգենք համատեղ աշխատանքը եվրակառույցներում, հանդես գանք համատեղ ծրագրերով եւ առաջարկներով, հաճախակի կատարենք փոխի եւ տեղեկատվության փոխանակումներ, պատշաճենք միմյանց շահերը եւ այլն: Համագործակցության լայն շրջանակներ են բացվում այդ ուղղությամբ նաեւ Ուկրաինայի եւ Մոլդովայի հետ: Այստեղ պետք է հատուկ նշել, որ եվրակառույցներում ինտեգրացվելու ճանապարհին է գտնվում նաեւ Ռուսաստանը, որը ոչ միայն չի խոչընդոտում ԱՊՀ անդամ այլ երկրների նմանատիպ գործընթացները, այլեւ շատ դեպքերում նույնիսկ խրախուսում է դրանք: Էներգետիկայի եւ սակայն համագործակցությունը մեր հաջողությունների կարեւոր գրավականներից մեկն է: Այստեղ հետաքրքրական նկատառումներ կան նաեւ մեր մեկ այլ հարեւանի՝ Իրանի կողմից, որի նորընտիր կառավարությունը հստակորեն արտահայտվեց Եվրոպական միության հետ հարաբերությունների բարելավման օգտին, եւ Հայաստանի ակտիվ ներգրավվելը եվրոպական գործընթացներում կարող է հեռագայում նրան կաղող օղակի դեր վերապահել Եվրամիություն-Իրան հարաբերություններում:

Նույնը սակայն չի կարելի ասել Թուրքիայի մասին: Լինելով տարածաշրջանի միակ երկիրը, որը զարգացած կապեր ունի Եվրամիության հետ եւ անդամակցում է Մաստրիխտյան միությանը, Հայաստանի հանդեպ վարած իր միակողմանի քաղաքականությամբ Թուրքիան փակում է Եվրոպա տանող մեր ցամաքային ճանապարհը, ինչն ինքնըստինքյան խոչընդոտ է դառնում նաեւ մեր եվրաինտեգրացման ճանապարհին: Չափազանց կարեւոր է ԵՄ անդամակցության 11 թեկնածուների (Արեւելյան Եվրոպայի երկրներ եւ Կիպրոս) փորձի ուսումնասիրումը, դրական եւ ժխտական դրսեւորման ատացածների համեմատումը, այդ երկրների՝ եվրաինտեգրացիոն կառույցների հետ խորհրդատվությունների անցկացումը եւ այլն: Եվ իհարկե, մենք պետք է բազմապատկենք մեր ջանքերը Եվրոպական միության անդամ-պետությունների հետ մեր հարաբերություններին նոր մակարդակ եւ որակ տալու ուղղությամբ՝ օգտագործելով բոլոր հնարավորությունները եւ լծակները՝ Հայաստանի եվրոպամետ ջանքերին նրանց աջակցությունն ստանալու նպատակով:

Մենք կանգնած ենք այսօր երկար եւ ծանր ճանապարհի նախաբեմին, սակայն եվրոպական ընդհանուր տան մեջ Հայաստանի ընդգրկումն ի վերջո հաստատում կդառնա մեր այն բոլոր մտավորական հսկաների ձգտումներին, մեր ժողովրդի դարավոր այն զոհողություններին, որոնք ուղղված էին Հայաստանի եւ հայ ժողովրդի՝ իր բնական միջավայրում աղբելու, զարգացման եւ բարգավաճման նպատակին:

ԱՐՄԵՆ ԴՈԲՍ

ԱՍՈՒԼԻՍ

Հոգատարությունն աղեսի գոտու նկատմամբ ավելանո՞ւմ է

Հոկտեմբերի հունվարի 14-ին կայացած քաղաքաշինության նախարարության կոլեգիայի ընդլայնված նիստը, որին մասնակցում էին Շիրակի մարզպետ Արարատ Գոնցյանն ու մարզպետարանի ներկայացուցիչները, վերաբերում էր 1997-ին աղեսի գոտում կատարված աշխատանքների ամփոփմանը: Դրանք լրագրողների ուշադրությանը ներկայացվեցին երեկ հրավիրված ասուլիսի ընթացքում: Հաղորդման համաձայն 1997 թվականին բնակարանային շինարարությունը 3 անգամ գերազանցել է 96-ի ծավալները: Մինչ 97-ը աղեսի գոտուն հատկացվող բյուջետային եւ ֆինանսական այլ աղբյուրներից միջոցները խիստ սակավ էին, իսկ 97-ին մարզում շահագործման է հանձնվել 66 հազար քմ տարածք, այսինքն՝ 853 բնակարան: Դրանցից 156-ը կառուցվել են պետբյուջեի տրամադրած միջոցներով (13 624 քմ), 324 բնակարան (22754 քմ) Համաշխարհային բանկի, 108 բնակարան (864 քմ) «Հայաստան» հիմնադրամի, 77 բնակարան (4781 քմ) տարբեր գերատեսչությունների ֆինանսական միջոցներով (այդ թվում 1775 քմ (35 բնակարան) ՆԳՆ եւ ԱՆՆ միջոցներով: Մարզում շահագործման են հանձնվել 4 դպրոց եւ 1 երբահամալիր 2084 աշակերտի համար, այդ թվում Հայր եւ որդի Պողոսյաններ հիմնադրամի «Հայաստան» հիմնադրամին տրամադրած միջոցներով դպրոց 140 աշակերտական տեղով: Ընթացքի մեջ են պետական վարկերի միջոցով 18 առանձնատներ շինարարական աշխատանքները: Հարկավոր նյութական նոր բնակարանների կառուցումը կլինի շարունակական ծրագիր, ինչպես ավելի վաղ «Ազգին» տված հարցազրույցում նշել էր ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարը:

Շիրակի մարզում գազիֆիկացվել են 8000 կոմունալ օբյեկտներ, որոնցից 5 հազարը Գյումրիում: Սոցիալական ներդրումների հիմնադրամի հովանավորությամբ կառուցվող 14 օբյեկտներից անցյալ տարի շահագործման են հանձնվել 5-ը: 97-ին Գյումրիում կառավարության կողմից հատկացված միջոցներով վերականգնվել են 347 ժամանակավոր կացարանների տանիքներ: Շահագործման են հանձնվել նմանատիպ մշակութային, տնտեսական նշանակության այլ օբյեկտներ, ինչպես օրինակ Գյումրիի ժողովրդական ճարտարապետության եւ կենցաղի թանգարանը, «Հայէլեկտրոկոնդենսատոր» գործարանի մասնաճյուղը:

Հիմնական վերանորոգման են ենթարկվել 137 կմ գլխավոր մայրուղիներ եւ միջմարզային ճանապարհներ: Ջրանցքների ջրատարների նորոգման ցանցերի բարելավման համար նախորդ տարում ներդրվել է 214 մլն դրամ գումար:

1998-ին կապիտալ-շինարարական աշխատանքների ծավալների եւ բյուջեից համապատասխան հատկացումների, ինչպես նաեւ երկրաշարժի 10-րդ տարելիցի առթիվ ծրագրերի մասին մեզ չհաջողվեց փաստական տվյալներ ստանալ: Պարզապես մարզպետարանի ներկայացուցիչը ցանկություն հայտնեց առաջիկայում Գյումրիում հանդիպում կազմակերպել լրագրողների հետ, որի ընթացքում կներկայացվեն ոչ միայն քաղաքաշինության ասպարեզին վերաբերող, այլեւ ողջ աղեսի գոտու խնդիրներն արծարծող հարցերը:

Ա. Գ.

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

Հեռախոսավարձի զեղչի «վերանվաճման» գործընթաց «էգուց արի» սկզբունքով

Զոհված ազատամարտիկների ընտանիքները, ինչպես հայտնի է, ընդգրկված են կառավարության սահմանած այն «արտոնյալների» ցուցակում, որոնք դեռեւս պահպանում են կոմունալ վճարումների, մասնավորապես հեռախոսային կապի համար 50 տոկոս զեղչով վճարելու իրավունքը: Բայց արի ու տես, որ մազից կախված այդ իրավունքը հաստատել եւ վերահաստատել է պետք, եւ ամենից հաճախ ժամանակի եւ նյարդերի գնով, ինչպես օրինակ, Սադո Աննա Ղուկասովայի դեպքում, որը, չդիմանալով հեռախոսավարձի զեղչի «վերանվաճման» փորձությանը, «Ազգի» խմբագրություն է դիմել օգնության խնդրանքով:

Ղուկասովայի որդին Նիկոլայ Սադոն, զոհվել է Շահումյանում, եւ մայրն օգտվում է հիշյալ արտոնությունից, որ սահմանված է մինչեւ 1998 թ., որից հետո պետք է նորոգվի: Սակայն հեռախոսավարձի զեղչի «իրացումը», պարզվում է, հեշտ լուծելի խնդիր չէ: Ավտոմատ հեռախոսակայանի աշխատակիցները (տիկնոջ հեռախոսահամարն է 72-02-18), բերեւս, առաջնորդվում են Թումանյանի հայտնի հեքիաթի հերոսի «էգուց արի» գործելակերպով՝ անհայտ պատճառով ձգելով արտոնության ձեւակերպումը: «Քանի, ախպեր, գնամ ու գամ» պատասխան հարցադրումը հեռու է նյութական եւ բարոյական փոխհատուցում լինելուց, ուստի, ընդառաջ գնալով մեր նամակագրին, հեռախոսակայանի աշխատակիցներին «բախանձագին» խնդրում ենք հետեւել մեր օրինակին եւ նույնպես ընդառաջել իրենց բաժանորդուհուն «կարճելով» նրա անհարկի տառապանքը:

Լ. Պ.

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Ազգային

ՀԱՅԱՏԷՍ ՍՓՅՈՒՌՔԻՑ

Իրատեսությունը պարտողականություն չէ

Այսոր՝ իսի մտորումներու մէջ, երբ անգամ մը եւս կը բերբաստի հանգուցեալ Ջոն Կիրակոսեանի «Հայաստանը միջազգային դիւանագիտութեան եւ սովետական արտաքին քաղաքականութեան փաստաթղթերում» հատորը (Երեւան, 1972), նայուածքս խամուած մնաց վաւերաթուղթի մը վրայ: «Ռուսական Սոցիալիստական Ֆեդերատիւ Սովետական Հանրապետութեան եւ Հայաստանի Հանրապետութեան հաշտութեան պատուիրակութիւնների եզրափակիչ որոշման արձանագրութիւնը» վերնագրեալ եւ 20 հոկտեմբեր 1920 թուակիր փաստաթուղթին 2-րդ յօդուածը տառացիօրէն կ'ըսէ հետեւեալը. «Որ Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը, իրեն հերթին, անվերապահօրէն կը հրաժարուի որեւէ պահանջներից այսոր

ներուն մէջ չեն տեսներ մեր պահանջները ուրացող աղազգային անձնաւորութիւններ: Ընդդիմադրութիւնը 1990-էն ի վեր կը յանկերգէ Ղարաբաղը ծախուած է վարկածը, առանց դոյզն չափով ընդունելու, որ «աղազգային» այդ իշխանութիւններու օրով կրկնապատկուեցաւ Արցախի տարածութիւնը:

Նախաքրիստոնեական խորհրդաժողովի նախօրեակին «պարտուողական» քաղաքականութեան վարկածը յօդս ցնդեցաւ, երբ ՀՀ արտաքին գործոց նախարար Ալեքսանդր Արզումանեան արտասանեց իր ճառը ԵԱՀԿ-ի գերագոյն ծանի ներկայացուցիչներուն առջեւ: Պաշտպանելով դարաբաղեան բնուկը բանակցութեան ճանապարհով լուծելու ՀՀ դիրքորոշումը, թուացեալ «փոխզիջողութեան» եւեն հայկական դիւանագիտութիւնը կէս մը կ'արտաքին Արցախի նկատմամբ իր յանձնառութիւններէն: Քրիստոնեաները մէջ եւս կը պաշտպանէ Արցախի ազատ ինքնորոշման իրաւունքը:

Սակայն, անցեալին մեր դէմ գործածուած անիրաւութիւնները, որոնց կրկնութեան հաւանականութիւնը այնքան ալ անիրաւես չի թուիր այս օրերուն, կասպից ծովու քարիւղէն արբեցած գերհզօր պետութիւններու երկրիի քաղաքականութեան հետեւանքով, մեզ կը մղեն մտածելու նիւթուող դաւադրութեան մը մասին: Տարբեր պետութիւններու վարչակարգերը տարալած քարիւղային այդ ընկերութիւնները, իրենց պետութիւններու օրինութեամբ արդեօ՞ք չեն կրնար դաւադրել Արցախի ու Հայաստանի դէմ մեզ ոնեաստակ դարձնելով: Տարօրինա՞կ է, որ «Լոս Անջելըս Թայմզ» օրաթերթի 17 դեկտեմբերի համարին մէջ կը տպագրուի Սելինա Ուիլիրմզի մէկ յօդուածը դարաբաղեան հակամարտութեան շուրջ եւ կ'եզրափակուի սա նախադասութեամբ՝ «Վերլուծողները կ'ըսեն, թէ դարուս աւարտին, Ատրպէյճանը, որ արդէն ունի 30 միլիարդ դոլարի քարիւղային ներդրումներու խոստումներ, աւելի ուժեղ դիրք մը պիտի ունենայ որեւէ բանակցութեան ընթացքին: Ասիկա պիտի պատահի մասամբ, որովհետեւ Ուաշինգթընի մէջ ամերիկեան քարիւղային շահերը պիտի գերակշռեն՝ քան հայկական ծագումով ամերիկահայերու ուժեղ լոբիինգը»: Մի՞թէ այս արտայայտութիւնը կը վերաբերի բացառաբար ԱՄՆ-ին: Նոյն նժարին վրայ պիտի չդրուի՞ն նաեւ Ռուսաստանը, Ֆրանսան, Անգլիան եւ այլն: Ազգային մեր ողբերգութեան լուռ ականատեսները չէի՞ն անոնք Առաջին հանրապետութեան տարալման տարիներուն:

Իր ժողովուրդի ֆիզիկական ապահովութեան եւ երկրին տարածքային ամբողջականութեան համար երդում կատարած նախագահն ու իր գլխաւորած պետութիւնը չեն կրնար դաւաճանել Արցախին: Այսուհանդերձ, անոնց պարտականութիւնն է իրատեսութեան հրաւիրել ժողովուրդը՝ հորիզոնին վրայ կուսակցող գորշ ամպերուն ի տես: Լոս Անջելըսէն կամ սփիւռքի այլ քաղաքէ մը արձակուած վերամբարձ ճառերը պիտի չփրկեն կացութիւնը, եթէ փորձ կատարուի յեղաշրջելու շահուած յաղթանակները՝ ի շահ Ատրպէյճանի եւ քարիւղային քոնսորթիումներու: Մեզ ուղենիք պէտք է ծառայէ այն հասկացութիւնը, որ դիւանագիտութիւնը կարելին իրագործելու գիտութիւնն է, այլ երբեմ ազգային ցանկութիւններ կամ երազներ սնուցանելու գիտութիւնը: Նախագահը այդ կը փորձէ հասկցնել, բախելով խուլ ականջներու: Ասուծոյ սիրոյն, չփորձենք ազգադաւներ որակել անոնք, որոնք կերտեցին դարաբաղեան յաղթանակները, մինչ մենք մեր տաքուկ անկիւններուն մէջ մսային մարգանքներով զբաղած էինք, տառապող ու կռուող մարդոց խրատներ բաշխելով: Ոչ ոք շահուածը իր ազատ կամքով չի կրնար վերադարձնել բշնամիին: Յոռեգոյն պարագային, միջազգային ճնշումներու տակ մեր վերադարձնելիքը կախում ունի մեզմէ, եթէ այսօր մեզմէ ընդմիշտ չէ հեռացած իրատեսութիւնը, որ բնաւ համազօր չէ պարտուողականութեան: Այլապէս, ողբերգական պիտի ըլլար յայտնուիլ իրավիճակի մը մէջ, որ բաժին ինկած էր Լեւոն Տանդիկեանին՝ 20 հոկտեմբեր 1920-ին:

ՅԱՐՈՒԹ ՊՕՂԱՍԵԱՆ

ՏԵՍԱԿԵՏ

«Ֆրանսահայ համայնքը համայնք չէ...»

«ԱՄՆ-ի եւ Իսրայելի դաշնակից Թուրքիան Ադրբեջանի մշտական հովանաւորն է եւ Հայաստանի թշնամին, քանի դեռ բարձրացվում է ցեղասպանության հարցը», այսպես է կարծում Փարիզ-I համալսարանի դասախոս, պատմաբան Անահիտ Տեր-Մինասյանը: Նա հասակ տարանջատում է ցեղասպանության ճանաչումը եւ դարաբաղյան հարցը կարեւորելով վերջինս եւ ինչ-որ իմաստով նույնիսկ հակադրելով առաջինին:

«Ինչպե՞ս պիտի Հայաստանը պաշտպանի հայերի իրավունքները Ղարաբաղում, երբ միջազգային ատյանները պահանջում են առաջնությունը տալ տարածքային անձեռնմխելիությանը, հարցնում է նա: Ցեղասպանության ճանաչումը բոլորովին այլ հարց է: Դա Թուրքիայի վրա ճնշում գործադրելու միջոց է»: Այս հարցում Հայաստանի Հանրապետության գործադրած ջանքերը Անահիտ Տեր-Մինասյանը բավարար է համարում եւ նույնիսկ ավելորդ, քանի որ «սփյուռքը կարող է այդ հարցն իր վրա վերցնել»: Չմոռանանք, որ ընդհանուր առմամբ Հայաստանի ներքին եւ արտաքին քաղաքականությանը չխառնվող սփյուռքը վերջին ժամանակներում իր վրդովմունքն է արտահայտում ՀՀ-ի կողմից ցեղասպանության խնդիրը լռության մատնելու կապակցությամբ: Այս առումով Անահիտ Տեր-Մինասյանի դիրքորոշումը սոլո է բոլորովին այլ տոնայնությամբ, ընդ որում ոչ մաժորային: «Ֆրանսահայ համայնքը համայնք չէ եւ գուցե երբեք չի էլ եղել: Համայնքն ունենում է գործող կառույցներ, գաղափարախոսություն, ստրատեգիա: Ունե՞նք մենք այդ ամենը Ֆրանսիայում: Հաճախ գնահատված վիճակում են հատկապես իմ սերնդակիցները: Ես ելք չեմ տեսնում: Նախկինում Դաշնակցությունը կարեւոր տեղ էր զբաղեցնում, կային Դաշնակցության կողմնակիցներ եւ հակառակորդներ: Այսօր նա զգալիորեն թուլացել է եւ ի զորու չէ մարդկանց իր շուրջը համախմբելու»:

Այնուհետեւ Անահիտ Տեր-Մինասյանը հիշեցնում է, որ նույն փակուղու առաջ հայտնված հրեական համայնքը զարթնել պրեց վեցօրյա պատերազմից հետո, 1967-ին: Եվ իր ուժերը կենտրոնացրեց Իսրայելի պետությանը սատարելու եւ ամրապնդելու վրա: «Եթե հայերն իրենց միասնական ջանքերը ուղղեն Ղարաբաղի հայության իրավունքների պաշտպանությանը, արդյունքը կարող է նույնը լինել»: Սանա վանդ որ կան մի շարք օրինակներ: Երբ հայկական ցեղասպանությունը ժխտող ֆրանսիացի պատմաբան Բեռնար Լյուիսին պիտի շնորհվեր Թել Ավիվի պատվավոր քաղաքացու կոչումը, Երուսաղեմի հայությունը բողոքեց եւ այդ որոշման իրականացումը հետաձգվեց: Իսկ, օրինակ, Ֆրանսիայի մասնագիտական բարձրագույն մրցույթի հարցաշարում հայկական ցեղասպանությունը ընդգրկված չէ: Եվ ոչ ոք այդ հարցը չի էլ բարձրացնում: Դուրս է գալիս, որ փորձում ենք շահել մեծ վեճերը, իսկ փոքր վեճերը տանուլ ենք տալիս:

«Հուսալ, որ ցեղասպանությունը միջազգայնորեն կճանաչվի, դաստակ գլխացավանք է, ասում է Անահիտ Տեր-Մինասյանը: Թուրքիայում ոչ ոք չգիտի այդ մասին: Ի դեմ, նույն ձեւով թուրքերի հիշողությունից ջնջվում է իսլամը եւ Օսմանյան կայսրությունը: Վերջապես ենթադրենք, թե Թուրքիան ճանաչեց ցեղասպանությունը: Ի՞նչ կլինի հետո: Հայերը կդադարե՞ն հայ լինելուց: Չէ՞ որ Ֆրանսիայում առերեւույթ սա է նրանց միավորող տարրը»:

«Ֆրանս-Արմենիս»-ի
Պատրաստեց Ե. ՍԱՐԳՍՅԱՆԸ

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայագիտական երկու արժեքավոր հրատարակություններ

Նախանցյալ տարվա թվականը կրող, բայց փաստորեն 1997-ի վերջին ամիսներին Լիբանանում լույս են տեսել հայագիտության, մասնավորապես հայկական պատմությանն ու բանասիրությանը վերաբերող երկու արժեքավոր հրատարակություններ:

Առաջինը Միսաք Սիսեռյանի «Պատմութիւն Զէյթունի (1409-1921)» հատորն է, որը Զէյթունի 1895-1896 թթ. հերոսամարտի 100-ամյակի առթիվ հրատարակել է տասնամյակներ առաջ մահացած հեղինակի որդին Լիբանանի «Զէյթունցիներու հայրենակցական միութեան» ատենապետ, Կիլիկիայի կաթողիկոսությանը կից Ազգային բուժարանի գլխավոր բժիշկ Սեղոյան Սիսեռյանը: Եթե խոցելի են հեղինակի տեսակետները հայ ժողովրդի ծագման վերաբերյալ, սակայն նրա շարադրած նյութերը Զէյթունի բարբառի, ազգագրության ու պատմության, հատկապես Զէյթունի 1862, 1895-1896 եւ 1920-22 թթ. հերոսամարտերի մասին ունեն հույժ կարեւոր նշանակություն ազգագրագետների, բարբառագետների, պատմաբանների, հայ ազգային-ազատագրական պայքարի պատմությունն ու սումնասիրողների համար:

691 էջանոց հատորը լույս է տեսել հազար օրինակ տպաքանակով: Վաճառից գոյացած գումարով հիմնվելու է «Զէյթուն» հիմնադրամ:

Երկրորդ հրատարակությունն է «Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռի Երանելի Տ. Բարգէն Աթոռակից Կաթողիկոս Կիլէսերեանին (1868-1936) անտիպ նամակները ուղղուած վիեննական Մխիթարեան հայրերուն (1895-1936)»: Գիրքը կազմել, խմբագրել եւ ծանոթագրել է նույն Աթոռի միաբան Վարդան արք. Դեմիրճյանը, իսկ հրատարակել է կաթողիկոսարանի հրատարակչությունը:

Այս դարի կիլիկյան հայրապետներից հայագիտական մեծագույն վաստակ ունեն Գարեգին Հովսեփյանը եւ Բարգեն Գյուլեսերյան կաթողիկոսները: Եթե առաջինի վաստակի կարեւոր մեկ մասը հրատարակված է, ցավոք, նույնը չի կարելի ասել լուսահոգի Բարգեն կաթողիկոսի մասին: Այս գրքով, Վարդան արքեպիսկոպոսը շնորհակալ ու բարեխիղճ աշխատանք է կատարել այս «սպիտակ բծի» վերացման ուղղությամբ: Նամակների միջից մեր առաջ է պարզվում տաղանդաշատ մի հայագետ կրոնական, որի այս նամակները շատ մեծ արժեք են ներկայացնում հայագիտության համար: Իր կողմից, Վարդան արքեպիսկոպոսը նամակները նկարագրում է մանրամասնորեն, գրում դրանց գրելու թվականի, պայմանների եւն մասին, հաճախ էջատակի ծանոթագրությունների ձեւով տալիս հավելյալ տեղեկություններ կամ պարզաբանումներ: Իսկ հատորի «Հառաջաբանում» բերված Բարգեն կաթողիկոսի կենսագրությունը առ այսօր լավագույն կենսագրականն է բազմավաստակ հայրապետի մասին:

ԳԵՎՈՐԳ ՅԱՇՔՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Կորեական ճգնաժամի արձագանքները

Կորեայի նախագահ ընտրվելուց 5 օր հետո, դեկտեմբերի 23-ին, Կիմ Դե Չժունը հայտարարեց բառացիորեն հետեւյալը. «Իմանալով մեր վիճակը, ես չեմ կարողանում ասել: Իրողությունն այն է, որ մենք փող չունենք: Մենք չգիտենք, թե վաղը կամ մյուս օրը չե՞նք սնանկանա արդյոք»:

Դեռ մի քանի ամիս առաջ Հարավային Կորեան աշխարհի 11-րդ տնտեսական տերությունն էր: Այսօր ֆինանսական ճգնաժամի հետեւանքով կորեական վոնի փոխարժեքը դոլարի նկատմամբ կիսով չափ նվազել է: Երկրի ֆինանսների նախարարությունը դեկտեմբերի վերջերին ստիպված եղավ խոստովանել, որ կորեական ձեռնարկությունները եւ դրանց արտասահմանյան մասնաճյուղերի պարտքը հասնում է 200 միլիարդ դոլարի, այսինքն երկրի մեկ բնակչի հաշվով կազմում է 4000 դոլար: Պարտքի տոկոսների դիմաց 1997 թ. վերջին պետք է վճարվեր 15 մլրդ դոլար, 1998 թ. հունվարին՝ եւս 15 մլրդ:

Երկրի տնտեսական աճի անկման բացասական հետեւանքները արդեն զգացվում են: Կորեայի ավտոմոբիլաշինական չորս ընկերությունները պահեստամասերի ծանակարարի սնանկացումից հետո ստիպված դադարեցրին արտադրությունը: Այստիսով, արտահանական գլխավոր ճյուղերից մեկն այլեւս չի գործում հենց այն պահին, երբ տարադրամի սուր պակաս զգացող կորեական ձեռնարկությունները հույսները դրել են արտահանության վրա:

Ներկա պահին Միջազգային արժութային հիմնադրամի խոստացած ավելի քան 60 միլիարդ դոլարն այլեւս բավարար չէ: Կորեայի տնտեսական առողջացման նպատակով ԱՄՆ-ը եւ «Մեծ յոթնյակի» մյուս երկրները շատ կարագով հաստատել են 10 մլրդ դոլարի վարկ, զարգացման ասիական բանկը՝ եւս 4 մլրդ, իսկ Համաշխարհային բանկը 7 միլիարդ:

Զարգացած երկրների եւ խոշորագույն բանկերի առատաձեռնությունը բացատրվում է ճգնաժամի տարածման հանդեպ նրանց երկյուղով: Կորեական ճգնաժամն արդեն իսկ հարվածում է Լատինական Ամերիկայի, Կենտրոնական Եվրոպայի երկրներին եւ նախկին խորհրդային այն հանրապետություններին, որտեղ Սեուլը մեծ ներդրումներ է արել: Վճարումների դադարեցումը կարող է համաշխարհային լուրջ հետեւանքներ ունենալ: Ճգնաժամը կարող է տարածվել Ճապոնիայում, որի բանկային համակարգի թուլությունները իրենց հերթին կվնասեն ոչ միայն Ասիային, այլեւ ԱՄՆ-ին ու Եվրոպային:

Միջազգային արժութային հիմնադրամը 1997 թ. դեկտեմբերին վերահաշվարկ կատարելով պարզեց, որ կորեական ճգնաժամի ոչնչացումով 1998 թ. համաշխարհային տնտեսական աճի հոկտեմբերին արված կանխատեսումները պետք է վերանայվեն: Այդ աճը կնվազի 0,8 տոկոսով եւ կկազմի 3,5 տոկոս: Նախորդ կանխատեսման համեմատ Ինդոնեզիայի տնտեսական աճի ցուցանիշները նվազեցվել են 4,2 տոկոսով, Մալայզիայինը՝ 4, բուն Հարավային Կորեայինը՝ 3,8, Թաիլանդինը՝ 3,5, Ճապոնիայինը՝ 1, Հոնկոնգինը՝ 0,9 տոկոս եւ այլն:

Այս իրավիճակի միակ պատճառը կորեացիների պարտքերն են: Հարավկորեական ձեռնարկությունները ավանդաբար պարտք են վերցնում իրենց սեփական ֆոնդերից 3-4 անգամ մեծ գումարներ: Վերջին տարիներին պարտքերի աճին նպաստեցին ցածր զեղչադրույքները: Այս խաղականությունն անվնաս է տնտեսական աճի եւ դրամաշրջանառության կայունության դեպքում: Բայց ներկայումս դրանք բացակայում են: Ներքին պահանջարկը նվազել է, իսկ կանխիկ դրամը այլեւս չի բավարարում: Երկիրն այժմ վստահություն չի ներշնչում, եւ վարկառուների վճարունակությունը գնահատող միջազգային ֆինանսական գործակալությունները իջեցրել են Կորեայի վարկանիշը նրան դասելով Պակիստանի կամ Դոմինիկյան Հանրապետության հետ միեւնույն շարքում:

Սկզբունքորեն Կորեան կարող է հաղթահարել ճգնաժամը եւ տարեկան առաջադիմել 7-8 տոկոս տնտեսական աճ: Պետքը ուշեն համակարգված է եւ բուն երկրի պարտքը (ի տարբերություն իր բանկերի եւ մասնավոր հարվածի) տոկոսային առումով համեմատելի է Ավստրալիայի պարտքի հետ: Բայց դրա համար կառավարությունը պետք է վերականգնի վստահությունը, որը շատ դժվար կլինի, հանգի Միջազգային արժութային հիմնադրամի փոխատվության դիմաց Կորեան ստիպված եղավ 2,5 տոկոսով նվազեցնել կանխատեսվող աճը, բարձրացնել տոկոսադրույքները եւ ընդունել խախուտ բանկերի ու արդյունաբերական կոնգլոմերատների սնանկացման փաստը:

Այս միջոցառումների հետեւանքով գործազուրկների թիվը կարող է կրկնապատկվել եւ նույնիսկ եռապատկվել այդ երկրում, որտեղ սոցիալական թույլ ապահովության պայմաններում գործազրկությունն ավանդաբար համարվում է նվաստացման գագաթնակետ: Ազգային տարադրամի վոնի արժեզրկումը իր հերթին կհանգեցնի սննդամթերքի եւ էներգիայի թանկացմանը:

Պատրաստեց
ՊԵՏՐՈՍ ԲԵՐԻԲՅԱՆԸ

ՀԱՄԱՌՈՏ

Յասեր Արաֆաթը չի բացառում նոր պաղեստինյան ապստամբությունը

ԿԱՀԻՐԵ, 15 ՀՈՒՆՎԱՐ, ԱՐՍԵՆՊՐԵՍ: Պաղեստինցիների առաջնորդ Յասեր Արաֆաթը չի բացառում պաղեստինյան նոր ապստամբության հնարավորությունը, եթե Վաշինգտոնի բանակցությունները արդյունքներ չտան: «Եթե տարածաշրջանային հաշտության գործընթացը վերջնականապես տապալվի, ապա հնարավոր են իրադարձությունների զարգացման բոլոր տարբերակները, ներառյալ նաեւ նոր ապստամբությունը», ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի Հորդանանի վարչապետ Աբդել Սալամ ալ Մաջալու հետ բանակցությունների ավարտին հայտարարել է պաղեստինցիների առաջնորդը:

Իսպանիան 400 միլիոն դոլար վարկ կտա Թուրքիային

Օրերս ստորագրված համաձայնագրով, Թուրքիայի կառավարությունը առաջիկա չորս տարվա ընթացքում 400 մլն դոլար վարկ կստանա Իսպանիայի կառավարությունից: Գումարը կօգտագործվի երկրի արհեստագիտությունը եւ ճարտարվեստը զարգացնելու, տարբեր ծրագրեր մշակելու նպատակով: Իսպանիան որոշել է նաեւ 10 մլն դոլարի նվիրատվություն կատարել Թուրքիային:

ՈՈՅԹԵՐ-ԵՐԵՎԱՆ

Հունաստանի պաշտպանության նախարարը թուրքական օդուժի թիրախ՞ն է

Օրերս Հունաստանի կառավարությունը տեղեկացրել է, թե թուրքական օդուժի 16 ինքնաթիռ, հերթական անգամ խախտելով Հունաստանի օդային սահմանները, ընդհուպ մոտեցել են պաշտպանության նախարար Ակիս Ցոխատզոպուլոսին փոխադրող ուղղաթիռին: Հունաստանի օդուժի միջամտության արդյունքում թուրքական ինքնաթիռները հեռացել են: Ինչպես հայտնի է, նախորդ տարվա ընթացքում թուրքական օդանավերը երկու անգամ վտանգել են Հունաստանից Կիպրոս թռչող նույն նախարարի ինքնաթիռը:

ՈՈՅԹԵՐ-ԵՐԵՎԱՆ

Աննախադեպ ձյուն Ճապոնիայում

ՄՈՍԿՎԱ, 15 ՀՈՒՆՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ճապոնիայում աննախադեպ ձյան տեղումների հետեւանքով հունվարի 15-ի առավոտյան երկրի ներսում հետաձգվել են շուրջ 200 չվերթներ: Խափանվել է ավտոմայրուղիների երթեւեկությունը, հաղորդել է ՕՌՏ հեռուստակայանը:

Չեչնիայի նոր կառավարությունում կլինեն 19 նախարարություն եւ գերատեսչություն

ԳՐՈԶՆԻ, 15 ՀՈՒՆՎԱՐ, ԱՐՍԵՆՊՐԵՍ: Չեչնիայի նոր կառավարությունում կլինեն 19 նախարարություն եւ գերատեսչություն: Ասլան Մասխադովը, որը պահպանել է վարչապետի պաշտոնը, կունենա հինգ տեղակալ, երկու առաջին փոխվարչապետ: Դարձել են Շամիլ Բասաեւը, որը վարչապետի ժամանակավոր պաշտոնակատարն է, եւ նախագահական խորհրդի նախկին անդամ Տուրպալ Ադգերիեւը, ինչպես նաեւ երեք փոխվարչապետեր. Սովլադի Ուդուգովը, որը կղեկավարի նաեւ արտաքին գործերի նախարարությունը, ուժային կառույցները տնօրինող Կազբեկ Մախաշեւը եւ Ահմեդ Զաֆաեւը, որը պատասխանատու է մշակույթի հարցերի համար: Կառավարության կազմի մեջ մտել են նաեւ երկու նոր նախարարներ. էկոնոմիկայի նախարար է դարձել Իսա Մոլլաեւը, ինչպես նաեւ արդարադատության նախարար Վախա Մուրքազալիեւը, որը նախկինում Չեչնիայի գլխավորական դատախազն էր:

Ինչպես հաղորդել է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը, հունվարի 13-ին Ասլան Մասխադովի հրամանագրով կազմալուծվել են Չեչնիայի ներքին գործերի նախարարությունը եւ անվտանգության ազգային ծառայությունը: Ներքգործնախարարության բազայի վրա ստեղծվել է նոր կառույց՝ շարիաթական անվտանգության նախարարություն՝ Իսլամ Խալիմովի գլխավորությամբ, որը նախկին կառավարությունում զբաղեցնում էր սոցիալական հարցերի գծով փոխվարչապետի պաշտոնը:

Չեչնիայի անվտանգության ազգային ծառայությունը վերանվանված է ազգային անվտանգության ծառայություն: Հանրապետության հատուկ ծառայության պետի պաշտոնակատար է նշանակվել Լեյլա Խուլտիգովը, որը նախկին գերատեսչությունում զբաղեցնում էր առաջին փոխտնօրենի պաշտոնը:

Սարսափելի մի նոր հիվանդություն

Հիվանդության H5N1 բժշկական անվանումն այնքան էլ սարսափազդու չի հնչում, բայց որ հիվանդությունն աղետներ է գործում, փաստ է: Ըստ «Նյուզուիք» հանդեսի հունվարի 5-ի համարի, դրան տրվում է նաեւ «հավի էբոլա» անվանումը, քանի որ վարակը շատ արագ է տարածվում միլիոնավոր հավերի շրջանում, սպանելով նրանց մեծամասնությանը:

Ամենասարսափելին, սակայն, այն է, որ հիվանդությունն արդեն սկսել է «մուտք գործել» բնակչության շրջան: Անցած տարվա մայիսից սկսած առնվազն 8 հոգի հիվանդանոց են տեղափոխվել Հոնկոնգում վերոհիշյալ հիվանդության ախտանշաններով: Նրանցից երկուսն արդեն մահացել են:

Մասնագետները ջանում են պարզել, թե արդյո՞ք այս նոր գրիպը վարակիչ է եւ համաճարակ է սպասվում 1998 թվականին: Եթե, իրոք, նման հիվանդություն բռնկվի մարդկանց շրջանում, 5-ամյա Չան Մանկեյը առաջին զոհերից է լինելու: Նրա զարմիկներից երկուսը H5N1-ով ախտորոշվել են, ինչը բժիշկներին հիմք է տալիս հայտնելու, որ հիվանդությունը կարող է փոխանցվող լինել: Ենթադրվում է, որ նրանք կարող էին վարակված լինել նաեւ «միեւնույն հիվանդ հավի հետ» շփվելու հետեւանքով:

Երկայիս Առողջապահության համաշխարհային կազմակերպությունն ու Ասլանայում տեղավորված հիվանդությունների վերահսկողության եւ կանխարգելման կենտրոնները փորձում են սահմանափակել վարակվածների հետ հանդիպումները: Նրանք աշխատում են նաեւ նոր պատվաստանյութ մշակել հիվանդության առաջն առնելու նպատակով:

Առայժմ նոր գրիպը տարածված է միայն Հոնկոնգում, բայց, ըստ բժիշկներից մեկի ենթադրության, «հնարավոր է, որ վարակահարուցիչ մանրէն իմն իրեն է սնում եւ մի օր հանկարծակի համաճարակ դայթի»:

Իհարկե, դեռ վաղ է ասել, սակայն եթե հաստատվի ենթադրությունը, ապա նոր հիվանդությունը կարող է իրոք դառնալ սարսափելի:

Լեհաստանը «փակում է» իր սահմանները

Վերջին տարիների ընթացքում աշխարհաքաղաքական հայտնի փոփոխությունների ֆոնի վրա Լեհաստանը առավելագույնս ներկայանում է ոչ այնքան որպես Ֆրեդերիկ Շոպենի կամ Ադամ Միցկեւիչի երկիր, որքան մեծածախ առեւտրի էժան շուկա: Յուրահատուկ մագնիսի սկզբունքով նա իր կողմն է ձգում մասնավորապես ԱՊՀ ամենատարբեր վայրերից տասնյակ հազարավոր վաճառականների, որոնց թվում հիշ չեն նաեւ մեր հայրենակիցները:

Լեհաստանի իշխանություններն ամեն կերպ խրախուսում էին նման առեւտրի զարգացումը, քանի որ դա նյութական առումով արդարացված գործարք է: Միեւնույն ժամանակ, այս ամենը բերեց նաեւ իրավիճակի իրականացում, իսկ Վարշավան, Բելոստոկը, Լյուբլինը, Գդանսկը եւ այլ քաղաքները վերածվեցին իսկական կլանային կենտրոնների:

Բացի այդ, գաղտնիք չէ, որ շատերը Լեհաստան էին ներթափանցում հեռագայում այնտեղից զարգացած կապիտալիզմի երկրներ (գլխավորապես Գերմանիա) անցնելու հավակնություններով: Դաշնային Գերմանիայի սահմանապահ ծառայության տվյալներով, Լեհաստանը կամուրջ է ԱՊՀ, ինչպես նաեւ Աֆրիկայի եւ Մերձավոր Արեւելքի քաղաքացիների, Գերմանիա մուտք գործելու համար:

Հունվարի 1-ից Լեհաստանի կառավարությունը հաստատել է երկիր մուտք գործելու մասին նոր օրենք, համաձայն որի ԱՊՀ երկրների քաղաքացիները արտասահմանյան անձնագիր ունենալուց զատ, պետք է ունենան նաեւ նոր տեսակի պաշտոնական հրավեր՝ ստացված մասնավոր կամ իրավաբանական անձից:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեր հայրենակիցը դեռ բավական հաճախ է լինելու Լեհաստանում, նպատակահարմար ենք գտնում ծանոթացնել նոր օրենքի մի քանի դրույթների:

Եթե նախկինում Լեհաստան մուտք գործող քաղաքացին (որպես երաշխիք) պետք է ունենար օրական 12 դոլարի չափով գումար, ապա 1998-ից այդ գումարն արդեն կազմում է 40 դոլար:

Նորարարություններն ազդելու են նաեւ գնվող եւ վաճառվող ապրանքների տեսակների վրա: Հունվարի 1-ից Լեհաստանի սահմանն անցնող յուրաքանչյուր անձ իրավունք ունի անցկացնելու միայն 1 լիտր բունդ ալկոհոլային խմիչք, երկու տիպ գինի, 500 գրամ սուրճ, 100 գլանակ ծխախոտ եւ 50 սիգարետ, ընդ որում ընդամենը ամիսը երկու անգամ: Հաստատական է, որ հենց այս ապրանքատեսակներն են նշված առեւտրի հիմքը, եւ դրանց նկատմամբ կիրառվելիք խիստ սահմանափակումները կոչված են սահմանափակելու նաեւ շատ առեւտրականների հոսքը Լեհաստան:

Ա. Ղ.

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Խաղում ենք եւ պիտի խաղանք Ղարաբաղում, ղարաբաղցիների համար

Հարցազրույց ԼՂՀ Վահրամ Փափազյանի անվան դրամատիկական թատրոնի գլխավոր բեմադրիչ Լեոնիդ Հարությունյանի հետ

– Դուք, իհարկե, գիտեք, որ հիմա երեւանցիներին չափազանց հետաքրքրում է ամեն ինչ, որ կատարվում է Ղարաբաղում: Գեղարվեստական կյանքը եւ թատերական կյանքը՝ նույնպես: Ասացեք, խնդրեմ, թե ի՞նչ պայմաններում է աշխատում Ստեփանակերտի դրամատիկական թատրոնը:

– Չնայած կյանքի բոլոր դժվարություններին, մեր չերեւացող պատերազմի պայմաններում Ղարաբաղն ապրում է լիարժեք հոգեւոր կյանքով: Նույնիսկ պատերազմի ընթացքում գեղարվեստական-գրական-մշակութային կյանքը դադար չի առել: Նույնիսկ պատերազմի թունդ ժամանակներում մեր թատրոնը ներկայացումներով ու համերգային ծրագրերով շարունակ հանդես է եկել նկուղներում, ժողովուրդը մեծապես ցնծությամբ է ընդունել մեր դերասաններին: Թատրոնից բացի՝ ունենք երգի-պարի պետական խումբ, էստրադային համույթներ, որոնք նույնպես ապրում են ստեղծագործական լեցուն կյանքով:

Ճիշտ է, կյանքը դժվարացել է, բայց այն իրողությունը, որ Ադրբեջանի իշխանությունից դուրս գալով մեր մշակույթը անմիջապես կապի մեջ է Հայաստանի մշակույթի հետ, մեծապես նպաստում է մեր գործունեությանը: Այդ կապը օգնում է մեզ հաղթահարել հոգեբանական մի մեծ պասնեբ, մինչեւ վերջերս մենք հայ թատրոն էինք Ադրբեջանի կազմում, իսկ հիմա հայ թատրոն մեր իսկ հայրենիքում: Ուրախությամբ պիտի ասենք, որ հենց միայն վերջին երկու տարվա ընթացքում երեք անգամ մասնակցել ենք Հայաստանի թատերական փառատոներին, որը նպաստում է մեր թատերական մշակույթի զարգացմանը եւ, միեւնույն ժամանակ, պարտավորեցնում է: Մենք նյութական դժվարություններից բացի, դերասանական ուժերի կարիք ունենք: Ափսոսանքով պետք է ասեմ, որ Երեւանի թատերական ինստիտուտի դերասանական բաժնի դարաբաղցի շրջանավարտները, Երեւանում աշխատանք գտնելով, չեն վերադառնում: Սա լուրջ խնդիր է, որ պատիվ չի բերում մեր երիտասարդությանը: Չնայած դրան, մենք անում ենք ամեն հնարավորը, որպեսզի պահենք մեր աշխատանային օրթը եւ նոր բեմադրությունների միջեւ երկար դադարներ չլինեն, այլապես դադարը կոտրում է թատրոնի մեջքը, հունից դուրս բերում, անաշխատունակ դարձնում դերասաններին: Մեր թատերախմբի ջանքերի շնորհիվ հին խաղացանկին վերջին մեկ ու կես տարում ավելացել է ինը նոր անուն:

– Դա, իհարկե, փիչ չէ: Ինքնին հասկանալի է, որ ամեն մի թատրոնի խաղացանկ ձեւավորվում է ըստ ոչ միայն թատրոնի ու նրա ղեկավարի ցանկության, այլեւ հանդիսատեսի նախասիրությունների: Եթե այդպես է, ապա ձեր թատրոնի խաղացանկը մեզ ցույց կտա, թե թատերական ի՞նչ պահանջներ եւ ճաշակ ունեն ղարաբաղցիները:

– Իրոք այդպես է, բայց մեր խաղացանկը ձեւավորվում է ոչ միայն թատրոնի գեղարվեստական խորհրդի եւ գլխավոր բեմադրիչի ցանկությամբ, այլեւ ըստ թատերախմբի ստեղծագործական կարողությունների: Ինչ վերաբերում է հանդիսատեսի պահանջին ու նախասիրությանը, ապա դա ինձ համար մեծ հարցական է: Ի՞նչ է սիրում հանդիսատեսը, կամ ո՞ր հանդիսատեսը: Նա, որը դեռի մեզ է գալիս, թե նա, որին մենք ենք ընդառաջ գնում: Մե՞նք իջնում ենք հանդիսատեսի մակարդակին, թե՞ բարձրացնում ենք նրանց: Այս իմաստով շարունակ որոնումների մեջ ենք: Չոքեսք է մոռանանք այն հանգամանքը, որ որպես հայ ռոմանտիկ ազգ ենք եւ չոքեսք է տարվենք գերժամանակակից արտասահմանյան դրամատուրգիայով: Ոչ էլ արտաքուստ գեղեցիկ, փայլփլուն ու թանկ ծեւավորված էժանագին շոուներով: Դրանց մեջ եւս տեսնում ենք ազգայինը կորցնելու վտանգ: Սա ազգային դիմագծի կորուստ է: դառնում ենք անծեւ, անդեմ, անհեռանկար ու պատմություն չունեցող ինչ-որ ազգ: Իսկ մենք այն ազգն ենք, որի թատրոնը վեհ ու գեղեցիկ գաղափարների կրողն է եղել: Մեր ժողովուրդն էլ է այդպիսին: Եթե այդպես չլիներ, ապա մենք չէինք ունենա այսօրվա Ղարաբաղը: դա մեր դարավոր երազանքի իրականացումն է: Մեր պատմության հերոսական էջը, որ արժանի է եւ պետք է իր արտացոլումը գտնի բեմահարթակում: Այստեղ է, որ պետք է հնչի սեփական երգի ձայնը: Մեր խաղացանկում ունենք բազմապիսի գործեր, բայց բոլորի մեջ էլ պահում ենք ռոմանտիկ գիծը:

Մենք խաղում ենք «Սիամանթո եւ Խջեզարե», ոմանք ֆծիծաղ են տալիս, բայց այդ գործը հանդիսատեսը լավ է ընդունում: Շատ լավ է ընդունում նաեւ արցախցի բանաստեղծ Վարդան Հակոբյանի «Արցախյան բալլադը», որն արտացոլում է դարաբաղյան շարժման եւ պատերազմական շրջանի դեպքերը:

Խաղում ենք նաեւ օտարազգի պիեսներ: Օրինակ, «Առլեկինը արքա» պիեսը, ուր արծարծվում է քաղաքական այնպիսի սուր հարց, ինչպիսին իշխանության եւ ժողովրդի հարաբերությունն է: ինչպես են արքաները հասնում գահի եւ ինչպես են կառավարում ժողովրդին:

Խաղում ենք «Հարսներ եւ սկեսուրներ» ներկայացումը, որը մեզ համար սկզբունքային նշանակություն ունի: Ինչո՞ւ: Սա Հակոբ Պարոնյանի գրվածքների հիման վրա Ռ. Աբրահամյանի ստեղծած պիեսն է կենցաղային թեմաներով, վեց նովել: Հիշեցնեմ, որ 1933-ից ի վեր Ղարաբաղում Պարոնյան չի բեմադրվել եւ մենք երկյուղ էինք կրում, թե մեր թատրոնը կարո՞ղ է արեւմտահայերեն հնչեցնել, իսկ հանդիսատեսը կհասկանա՞ Պարոնյանին:

– Իրոք, արեւմտահայերենն ինչպե՞ս հնչեցրին ձեր դերասանները եւ հանդիսատեսն ինչպե՞ս ընկալեց այդ լեզուն:

– Դերասաններին Պարոնյանը հրաժարեց: Խաղացին միջին եւ երիտասարդ սերնդի դերասանները, որոնց համար սա բացարձակ անծանոթ աշխարհ էր լեզվի, հոգեբանության, նաեւ մարդկային հարաբերությունների իմաստով: Նրանց դա հաջողվեց: Իսկ հանդիսատեսը Պարոնյանի լեզուն ընդունեց իբրեւ հարազատ լեզու: Շատ գոհ էին հատկապես ուսուցիչները, քանի որ երեխաները դպրոցում անցնում են արեւմտահայերեն, բայց ոչ մի օրինակ չունեն, որպեսզի կարողանան հասկանալ, թե ինչպես պետք է հնչի այդ լեզուն: Այսպիսով, մեր թատրոնը սատարել կրթական օջախի նշանակություն:

– Մեկ-երկու խոսք ձեր շրջագայությունների քարտեզի մասին:

– Մենք խաղում ենք Ղարաբաղի բոլոր շրջաններում: Հադրութի, Մարտակերտի, Ասկերանի շրջաններում, որտեղ ավերածություններից տուժած շինություններ են ու խաղալու պայմաններ չկան, մենք երբեմն խաղում ենք բացօթյա, առանց բեմական որեւէ ծեւավորման աշխատելով չկորցնել մեր կապը հանդիսատեսի հետ:

Մեր շրջագայությունների քարտեզը ընդարձակվել է, Ղարաբաղի սահմաններից դուրս է եկել՝ ընդգրկելով նաեւ Հայաստանի շրջանները: Այսպես, մենք հանդես ենք եկել Տաշիրում, Ալավերդիում, Վանաձորում, Գյումրիում եւ այլուր:

– Ղարաբաղի իշխանություններն ինչպե՞ս են օգնում ձեր գործունեությանը:

– Իշխանությունները օգնում են այն դեպքում, երբ հասկանում եւ սիրում են թատրոնը: Մեզ համար մեծ բարեբախտություն է, որ Ղարաբաղի մշակույթի նախարար Արմեն Սարգսյանը թատրոնը հասկանում ու սիրում է այն աստիճան, որ ներկա է լինում մեր ոչ միայն ներկայացումներին, այլեւ շատ հաճախ նաեւ փորձերին: Նա մեզ օգնում է եւ բարոյապես, եւ նյութապես: Մեր նախարարի ջանքերի շնորհիվ էր, որ ստեղծվեց «Անդրոմաքե» ներկայացումը:

– Ձեր «Անդրոմաքե» ներկայացումը ցույց տվեց, որ ի դեմս ժաննա Գալստյանի դուք ունեք մի շատ օժտված դերասանուհի:

– Այո, անշուշտ: Երբ մենք փորձերը սկսեցինք (20 օր տեւեց), հետաքրքիր զուգադիպությամբ նրա եւ աղջիկը, եւ հարսը տղաներ ունեցան: Բայց այդպիսի ծանրաբեռնվածության հետ նա երբեք չբացակայեց փորձերից:

– Երեւանցիների աչքում ժաննա Գալստյանը հռչակված է իբրեւ Ղարաբաղի հերոսուհի:

– Ինչո՞ւ միայն երեւանցիների: Ամբողջ սփյուռքը նրան գիտի: Արտասահմանից եկած ամեն մի պատվիրակություն անպայման առիթ է որոնում ժաննա Գալստյանի հետ հանդիպելու: Նա մեծ շնորհի տեր դերասանուհի է եւ ինտելեկտուալ, եւ արտիստական կարողությունների ու պլաստիկայի առումով: Կարելի է ասել, որ նա լիովին չբացահայտված հնարավորությունների դերասանուհի է, քանի որ իրեն արժանի շատ դերեր դեռեւս չի խաղացել եւ որոնցից շատերը, ցավոք, էլ չի խաղա ժամանակի ու տարիքի պատճառով: Բայց, իհարկե, կա դեռ մի շրջան, որտեղ նա կարող է դրսեւորել իրեն՝ իր ողջ կարողությամբ: Դրա ապացույցը Անդրոմաքեի դերն էր, որի մեջ նա մի անգամ եւս հնչեցրեց իբրեւ մարտիկ մինչեւ վերջ կռվելու եւ անպայման հաղթանակի հասնելու թեման:

– Ղարաբաղցիները թատրասե՞ր մարդիկ են:

– Այո, դա վկայությունը 65 տարի գոյություն ունեցող թատրոնն է: Ստեփանակերտը փոքր քաղաք է՝ 45-50 հազար բնակչությամբ եւ թատրոնի մեծ սերն է, որ այսքան տարիներ պահել է թատրոնը:

Չմոռանանք նաեւ Խանդամիրյանի թատրոնը, որ անցյալ դարից գոյություն է ունեցել Շուշիում եւ որտեղ խաղացել են Սիրանույշը, Աբելյանը, Իսահակ Ալիխանյանը: Ղարաբաղի հանդիսատեսին շատ սիրում էր Վահրամ Փափազյանը, որի անունով էլ այսօր կոչվում է մեր թատրոնը:

– Ինչո՞վ է տարբերվում մայրաքաղաքային հանդիսատեսը ձեր հանդիսատեսից:

– Մեր հին թատերասերները միշտ էլ գալիս են մեր ներկայացումներին, բայց մի խավ էլ կա, որ շատ է ուզում գալ թատրոն, բայց միջոցներ չունի: Ճիշտ է, մեր տոմսը շատ էժան է (մանկականը 80-100 դրամ է, մեծահասակներինը 150-200), բայց միեւնույն է, դա շռայլություն է միջին խավի մարդկանց համար: Մենք սերտ կապ ունենք դպրոցականների հետ: Դա անհրաժեշտ է վաղվա հանդիսատես ունենալու համար: Նոր սերունդը, որը պատերազմի մեջ է եղել կամ ծնվել է այդ ընթացքում, տեղյակ էլ չէ, թե ինչ բան է թատրոնը, ինչ է ներկայացումը: Եվ մենք էլ շատ գործ ենք անում նոր հանդիսատես դաստիարակելու համար: Իսկ ինչ վերաբերում է գյուղական ու քաղաքային հանդիսատեսին, նաղա կարելի է ասել, որ նրանց միջեւ տարբերություն գրեթե չկա: Գյուղերում կա հանդիսատես, որը զարմանալիորեն ավելի նրբազգաց է, ավելի թատերասեր, թատրոնի սիրահար, քան քաղաքի կենտրոնի բնակիչը: Օրինակ, Մարտունու շրջանի Կիրի գյուղը, կամ Քարինտակը, Աստղաշենը մեզ համար փորձարար են, եթե որեւէ ներկայացում այս գյուղերում արձագանք չի գտնում, ապա նշանակում է, որ մտածելու տեղ կա, ինչ-որ բան այնպես չէ, ինչպես պետք է:

– Ի՞նչ տրամադրություն է տիրում Ղարաբաղում: Ի՞նչ են մտածում ղարաբաղցիներն իրենց հանրապետության ճակատագրի մասին:

– Որքան էլ ծեզ համար անսպասելի լինի, պիտի ասեմ, որ շատ էլ լավ են մտածում եւ դարաբաղցու տրամադրությունը տեղն է: Ղարաբաղցու ոգին մարտական է: Նա իրեն հողի տեր է զգում: Ես քաղաքական գործիչ չեմ, բայց որպես հայ մարդ, ապրելով ու ստեղծագործելով այդ հողի վրա, միանշանակ կարող եմ ասել, որ Ղարաբաղում կարծես թե Ղարաբաղի պրոբլեմ չկա: Ո՞վ է տեսել սեփական տանը նստես ու մտածես, թե մեր հայրենի տունը կարող է ուրիշը վերցնել: Այդպես էլ մեր թատրոնը, մենք էլ վստահ ենք, որ պետք է ապրենք եւ ստեղծագործենք մեր տանը, մեր հայրենի օջախում: Խաղում ենք՝ եւ պիտի խաղանք Ղարաբաղում, ղարաբաղցիների համար:

Հարցազրույցը վարեց թատերագետ, արվեստի ինստիտուտի գիտական աշխատակից ԼԵՈՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԸ

ԵՐԵՎԱՆ

Բանավեճ «Լավ դպրոց, լավ տնօրեն» թեմայով

ԵՐԵՎԱՆ, 15 ՀՈՒՆՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Երեւանի քաղաքապետարանի կրթության վարչությունում գործում է «Բանավեճի ակումբը»: Յուրաքանչյուր ամսվա վերջին ուրբաթ օրը կրթության եւ ընդհանրապես դպրոցի խնդիրներով մտահոգված մասնագետներն ու բոլոր ցանկացողները կարող են մասնակցել բանավեճին, բարձրացնել իրենց հուզող հարցերն ու առաջարկել դրանց լուծման հնարավոր եղանակները, եւ ամենակարեւորը՝ լսել միմյանց: Հունվարի 30-ին կայանալիք հանդիպման համար արդեն որոշվել է բանավեճի թեման՝ «Լավ դպրոց, լավ տնօրեն»: Կրթության վարչությունում ասացին, որ տնօրեններից բացի՝ բանավեճի են հրավիրվել նաեւ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի եւ երիտասարդության հարցերի հանձնաժողովի նախագահ Տեր Հուսիկ Լազարյանը, կրթության եւ գիտության նախարար Արտաշես Պետրոսյանը: Քաղաքապետ Վանո Սիրադեղյանը եւս տվել է բանավեճին մասնակցելու իր նախնական համաձայնությունը:

Նոր գիտական խորհուրդներ Ակադեմիայում

ԵՐԵՎԱՆ, 15 ՀՈՒՆՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության նիստում հաստատվել է նոր գիտական խորհուրդների կազմը, որոնք 1998-ին կգործեն ակադեմիայում: Բնական գիտությունների բաժանմունքում ձեւավորվել է գյուղատնտեսական գիտությունների պրոբլեմային գիտական խորհուրդը (նախագահ՝ ակադեմիկոս Կարեն Պողոսյան): ԳԱԱ նախագահությանը կից կգործի էներգետիկայի պրոբլեմային խորհուրդը (նախագահ՝ ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյան): Նոր՝ մետալուրգիայի սեկցիա է ստեղծվել ֆիզիկամաթեմատիկական եւ տեխնիկական գիտությունների բաժանմունքի երկրի մասին գիտությունների պրոբլեմային խորհրդում, որի ղեկավարն է տեխնիկական գիտությունների թեկնածու Ռոբերտ Ենգոյանը:

ՄԱՅՐԵՆԻ

Ուզենք, որ էլ չսխալվենք

«Ազգ» 30.10.97. «...նշանակում է Արցախի վերագաղութացման եւ վերջին հաշվով արցախահայության ցեղասպանության հանցավոր աջակցություն»: Պետք է լիներ՝ «Արցախի վերագաղութացմանը եւ... ցեղասպանությանը հանցավոր աջակցություն»:

«Ազգ» 04.11.97. «Առաջարկվող փոփոխությունների մի մասը զուտ խմբագրական բնույթ էր կրում»: Խմբագրական բնույթի փոփոխության կարիք ունի նաեւ հիշյալ նախադասությունը. «Առաջարկվող փոփոխությունների մի մասը զուտ խմբագրական բնույթի էր»:

«...կուժեղացնեն Բեյրութի վրա գործարկվող ճնշումները»: Տեղին կլիներ «գործադրել» բառը: Գործարկում են նորակառույց գործարանը, ջրանցքը, սարքը եւ այլն, իսկ գործադրում՝ տնտեսական, քաղաքական, դիվանագիտական, բարոյահոգեբանական եւ այլ բնույթի ճնշումներ:

Համարում տեղ գտած ներքոհիշյալ օտար բառերի փոխարեն նպատակահարմար էր գործածել դրանց հայերեն համարժեքները. «կոորդինացնել-համակարգել», «պրոֆեսիոնալ-արհեստավարժ», «կոնստրուկտիվիզմ, կոնստրուկտիվ-կառուցողականություն, կառուցողական»:

«Ազգ» 12.09.97. «...ուշադրություն են հատկացնում այս երթուղուն, որ սկսվելով Իտալիայում, Ալբանիայում, Բուլղարիայում, այնուհետեւ անցնում է Անդրկովկասի եւ Միջին Ասիայի երկրներով...»: Երթուղին չի կարող մի քանի երկրներում սկսվել: Պետք է լիներ՝ «Սկսվելով Իտալիայից, անցնելով Ալբանիայով, Բուլղարիայով, այնուհետեւ Անդրկովկասի... երկրներով»»

ԼԵՉՎԻ ՊԵՏՍԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մարզական

ՇԱԽՄԱՏ

Հաղթանակներ սեւ խաղաքարերով

Իսպանիայի Լինարես քաղաքում շարունակվում է շախմատի խոշոր միջազգային մրցաշարը, որն այն հովանավորող հյուրանոցի անունով կրում է «Անիբալ» անունը: Վեցերորդ տուրում եւս Հայաստանի ներկայացուցիչները ուրախանալու առիթներ տվեցին: Արսեն Եղիազարյանը, սեւերով ոչ-ոքի խաղալով Ռուսաստանի հավաքականի անդամ, գրոսմայստեր Եռիշինի հետ, շարունակում է կրնկակոխ հետեւել միանձնյա առաջատար, անգլիացի Ենսոնի Մայլսին: Արսենին հասան եւս երկու հայ շախմատիստներ, որոնք այդ օրը, նույնպես խաղալով սեւերով, հասան հաղթանակների: Ընդ որում, եթե Կարեն Ասրյանը պարտության մատնեց իր հայրենակից Էլինա Դանիելյանին, ապա Սովսիսյանը հաղթեց Ուկրաինայի ուժեղագույն շախմատիստներից մեկին գրոսմայստեր Սավչենկոյին: Այժմ Մայլսը ունի 5,5, իսկ Եղիազարյանը, Սովսիսյանը, Ասրյանը մի քանի այլ մասնակիցների հետ 5-ական միավոր:

Լեւոն Արոնյանը եւ Վիգեն Միրզոյանը, ոչ-ոքի ավարտելով օրվա իրենց հանդիպումները, վաստակել են համապատասխանաբար 4,5 եւ 4 միավոր: Մրցաշարային դրությունը բարելավեց նաեւ Աշոտ Նադանյանը, որը շահեց իր պարտիան:

Մինչեւ մրցաշարի ավարտը մնում է չորս տուր:

Գ. Հ.

ՖԻԴԵ-ի անհատական նոր գործակիցները

Շախմատի միջազգային ֆեդերացիան երեկ հրապարակեց աշխարհի ուժեղագույն շախմատիստների անհատական նոր գործակիցները: Լավագույնների ցուցակը առաջվա նման գլխավորում է աշխարհի պրոֆեսիոնալ շախմատիստների չեմպիոն Գարի Կասպարովը, որը վերջին վեց ամսվա ընթացքում եւս հինգ կետով բարձրացրել է իր «էլոն»: Հետաքրքիր է, որ ՖԻԴԵ-ի գծով աշխարհի չեմպիոն Անատոլի Կարպովը զբաղեցնում է միայն 6-րդ հորիզոնականը:

100 լավագույնների մեջ Հայաստանը ներկայացված է իր երեք ուժեղագույն գրոսմայստերներով, որոնց ցուցանիշները, առաջին տասնյակի հետ ներկայացնում ենք ընթերցողների ուշադրությանը: Հաճելի է, որ Վլադիմիր Հակոբյանը, Ռաֆայել Վահանյանը եւ Սմբատ Լպուտյանը շարունակում են պահպանել իրենց դիրքերը լավագույնների մեջ:

ՖԻԴԵ-ն ավանդաբար հրապարակում է նաեւ լավագույն երիտասարդ (մինչեւ 20 տարեկան) շախմատիստների ցուցակները: Ուրախալի է, որ ուժեղագույնների հնգյակում տեղ է զբաղեցնում բոլորովին վերջերս գրոսմայստերի նորման լրացրած Կարեն Ասրյանը: Այստեղ մենք գտնում ենք եւս մեկ հայ շախմատիստի Սերգեյ Սովսիսյանի անունը, որը, ինչպես հայտնի է, այժմ ներկայացնում է Չեխիան: Շախմատիստուհիների նման ցուցակում տասնյակի մեջ է մտնում Էլինա Դանիելյանը:

Գ. Հ.

Աշխարհի 10 ուժեղագույն շախմատիստները

1. Գ. Կասպարով	2825
2. Վ. Կրամնիկ	2790
3. Վ. Անանդ	2770
4. Վ. Իվանչուկ	2740
5. Վ. Թոփալով	2740
6. Ա. Կարպով	2735
7. Գ. Կամսկի	2720
8. Ա. Շիրով	2710
9. Պ. Սվիդլեր	2690
10. Ա. Բելյավսկի	2690
23. Վ. Հակոբյան	2660
32. Ռ. Վահանյան	2640
59. Ս. Լպուտյան	2610

Աշխարհի 5 ուժեղագույն շախմատիստուհիները

1. Հ. Պոլգար	2670
2. Ժ. Պոլգար	2565
3. Պ. Կրամլինգ	2535
4. Մ. Չիբուրդանիձե	2535
5. Ա. Գալյամովա-Իվանչուկ	2505

Աշխարհի 5 ուժեղագույն երիտասարդ շախմատիստները

1. Պ. Լեկո	2670
2. Ս. Սովսիսյան	2595
3. Ռ. Պոնոմարյով	2580
4. Է. Բարո	2565
5. Կ. Ասրյան	2555

Աշխարհի 5 ուժեղագույն երիտասարդ շախմատիստուհիները

1. Ա. Ստեֆանովա	2480
2. Ի. Ռաձիեւիչ	2420
3. Կ. Պետյան	2410
4. Ս. Ժուկովա	2395
5. Հ. Հանս	2390
10. Է. Դանիելյան	2345

ԹԵՆԻՍ

Մրցաշարից մրցաշար

Աշխարհի ուժեղագույն թենիսիստները պատրաստվում են մրցաշրջանի գլխավոր մեկնարկներին: Մրցաշարերը հաջորդում են իրար:

Բավականին ուժեղ կազմ էր հավաքել Կատարի մայրաքաղաք Դոհայում անցկացված մրցաշարը, որի մրցանակային հիմնադրամը 1 միլիոն դոլար էր: Բավական է ասել, որ մասնակիցների թվում էին Գորան Իվանիշեւիչը (Խորվաթիա), Թիմ Հենմանն ու Գրեգ Ռուսեդսկին (երկուսն էլ՝ Անգլիա), Պետր Կորդան (Չեխիա): Այս քառյակից առավել հաջող հանդես եկավ Կորդան, որ մրցաշարի եզրափակիչում 6-0, 6-3 հաշվով հաղթեց ֆրանսիացի Ֆաբրիս Սանտորոյին: Հաղթողը որպես պարգեւ ստացավ 137 հազար դոլար:

Շատ անսպասելի ավարտ ունեցավ Ավստրալիայի Ադելաիդա քաղաքում անցկացված մրցաշարը, որն սկսվել է Սիդնեյ քաղաքում: Հեղինակավոր մրցումների առաջին իսկ շրջանում Յուիսը հաղթանակ տարավ աշխարհի թիվ 6 թենիսիստ, շվեդ Յոնաս Բյորկմանի նկատմամբ:

Խաղում է Անդրե Ագասին

Խոշոր անակնկալ գրանցվեց Սիդնեյի կանանց մրցումներում: 17-ամյա ամերիկուհի Վենուս Վիլյամսը մեկնարկից առաջ հայտարարել էր, որ այս տարի դառնալու է աշխարհի առաջին թենիսիստուհին: Եվ այնպես ստացվեց, որ աշխարհի թիվ 1 ռակետ Մարտինա Հինգիսը առաջին իսկ խաղում հանդիպեց համեստությամբ չփայլող այս մարզուհու հետ: Եվ ինչ. Վիլյամսը համառ պայքարում (3-6, 6-4, 7-5) հաղթեց չեմպիոնուհուն:

Կանանց մեկ այլ մրցաշար Հոուդ Այլենդում, արդեն ավարտվել է: Այնտեղ հաղթող է դարձել Ամի Սուգիյաման, որը, սպորտին հրաժեշտ տված Կիմիկո Դատեից հետո, հավակնում է ճապոնիայի թենիսիստուհիների առաջատարը դառնալ:

Աշխարհի ուժեղագույն թենիսիստներից մեկը բրազիլացի Գուստավո Կուերտենը

ԼՈՒՐԵՐ

Օլիմպիադայի եւս մեկ մասնակից Հայաստանից

Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի եւ ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարարության սպորտավարչության համատեղ ստեղծած «Նագանո-98» շտաբը, որի ղեկավարն է սպորտավարչության պետ Արթուր Գեւորգյանը, տեղեկացրեց, որ ստացվել է դահուկային սպորտի միջազգային ֆեդերացիայի պաշտոնական գրությունը, որ գյումրեցի դահուկորդուհի Ալլա Միքայելյանն իրավունք ունի մասնակցելու Նագանոյի օլիմպիական խաղերին:

Մեր մարզուհին այդ պատվավոր իրավունքը ձեռք է բերել միջազգային մի շարք մրցումներում ունեցած հաջող ելույթների շնորհիվ:

Նախատեսվում է հանդիպում ՄՕԿ-ի նախագահի հետ

Այսօր Մոսկվայում, Կրեմլի մեծ դահլիճում կանցկացվի Ռուսաստանի օլիմպիականների ավանդական տոնահանդես-պարահանդեսը, որտեղ հայտնի կդառնա նաեւ անցած տարվա երկրի լավագույն մարզիկի անունը: Ռուսաստանի Դաշնության օլիմպիական կոմիտեի հատուկ հրավերով Մոսկվա մեկնեցին ՀԱՕԿ-ի նախագահ Ալեքսան Ավետիսյանը եւ գլխավոր քարտուղար Հարություն Յավրյանը: Հանդիպություններից բացի, նախատեսվում է նաեւ նրանց հանդիպումը ՄՕԿ-ի նախագահ, մարկիզ Խուան Անտոնիո Սամարանչի հետ:

Նախապատրաստվելով տարվա կարեւոր մեկնարկներին

Ինչպես արդեն հայտնել ենք, Ճաղկածորի օլիմպիական մարզաբազայում իրենց ուսումնամարզական հավաքն են անցկացնում ծյուդոյի, հունահռոմեական եւ ազատ ոճի ըմբշամարտի Հայաստանի հավաքականները: Երեկ նրանց միացան նաեւ բոքսամարտի եւ ծանրամարտի ազգային հավաքականները: Բոքսամարտիկները, թվով 20 հոգի, իրենց ուսումնամարզական հավաքը կանցկացնեն հավաքականի գլխավոր մարզիչ Ալեքսանդր Սարգսյանի ղեկավարությամբ: Ավելի բազմամարդ է ծանրամարտիկների խումբը (40 հոգի), քանի որ նրանց թվում են մեծահասակների, երիտասարդական ու պատանեկան հավաքականների անդամները: «Երկաթախաղի» վարպետների հավաքը կղեկավարի ծանրամարտի ազգային ֆեդերացիայի նախագահ Օգսեն Միրզոյանը:

Աշխարհի առաջնությունում

Ավստրալիայի Պերտ քաղաքում շարունակվում է ջրային մարզաձեւերի աշխարհի առաջնությունը:

Մրցումների ութերորդ օրը մեդալներ խաղարկվեցին վեց մրցաձեւերում: Երկու հաղթանակ տարան Ռուսաստանի մարզիկները:

Առաջնության հերոսուհիներից է ռուսաստանցի Օլգա Սեդակովան: Գեղալողի անհատական մրցումներում ոսկե մեդալ շահելուց հետո նա Օլգա Բրուսնիկինայի հետ հաղթեց նաեւ զույգերի պայքարում: Այդ օրը Ռուսաստանի հավաքականին երկրորդ ոսկե մեդալը բերեց սինխրոնական խաղերի առաջնի չեմպիոն Ալեքսանդր Պոպովը: 100 մ մրցաստարածության ազատ ոճով լողի եզրափակիչում նա ցույց տվեց 48,93 վայրկյան ժամանակ եւ սկզբունքային հաղթանակ տարավ ավստրալիացի Մայքլ Կլիմի նկատմամբ: Վերջինս, որն այս առաջնությունում արդեն երկու ոսկե մեդալ էր նվաճել, Պոպովից հետ մնաց 0,73 վայրկյանով: Հիշեցնենք, որ երկու լողորդներն էլ մարզվում են նախկինում հայտնի խորհրդային մարզիչ, այժմ Ավստրալիա տեղափոխված Գենադի Տուրեցկու գլխավորությամբ:

Ամերիկուհիները հաղթեցին 4x100 մետր ազատ ոճով փոխանցումալողի մրցումներում:

Պերտում երկրորդ ոսկե մեդալը նվաճեց չինուհի Չեն Յանը: Օլիմպիական խաղերի հնգակի չեմպիոնուհին այս անգամ հաղթեց 400 մետր ազատ ոճով մրցումներում:

Աշխարհի չեմպիոն դարձավ նաեւ Դենիս Սիլանտեւը (Ուկրաինա), որն առաջինն էր 200 մետր բաստերֆլայ ոճով մրցումներում:

Այս տարվա պայմաններում հնգօրյա ընդհանուր թիմային հաշվարկում առաջատար են ԱՄՆ-ի մարզիկները, որոնք 8 ոսկե մեդալ են շահել: Երկրորդ տեղում են ընթանում Ռուսաստանի ներկայացուցիչները՝ 7 ոսկե մեդալ: Հինգ բարձրագույն պարգեւի են արժանացել Չինաստանի մարզիկները: Շատերի համար անսպասելի է «դատի տերերի» Ավստրալիայի լողորդների հաջող ելույթը. շահած մեդալների քանակով նրանք չորրորդն են:

ԳԵՂԱՍՍԱՀՔ

Միլանից Նագանո

Միլանում շարունակվում է գեղասահքի եվրոպայի առաջնությունը:

Սպորտային զույգերի մրցումներում, որտեղ բացակայում էին աշխարհի չեմպիոններ Մանդի Վեթցելն ու Ինգո Շտոյերը (Գերմանիա), առաջին տեղի համար պայքարն ընթացավ Ռուսաստանի ներկայացուցիչների միջեւ: Եվրոպայի չեմպիոն դարձավ Ելենա Բերեժնայա-Անտոն Սիխարուլիձե զույգը: Նշանավոր մարզիչ Տամարա Մոսկվինայի սաները առաջ անցան Օխանա Կազակովայից եւ Արթուր Դմիտրիեւից, որոնց շնորհվեցին արծաթե մեդալները: Մրցանակային երրորդ տեղը բաժին հասավ Ֆրանսիայի ներկայացուցիչներին:

Իտալիայում անցկացվող առաջնության մյուս մրցաձեւերում նույնպես հաջող են հանդես գալիս Ռուսաստանի մարզիկները:

Պարային զույգերի պայքարում առաջատար են Պասա Գրիչուկն ու Եվգենի Պլատովը: Իսկ տղամարդկանց մենասահքի առաջատարը Ալեքսեյ Յագուդինն է:

Եվրոպական առաջնությունը գեղասահորդների համար կարեւոր ստուգատես է Նագանոյում կայանալիք ձմեռային օլիմպիական խաղերից առաջ:

Բրազիլացի Պելեն իր հայրենակիցների աշխարհի լավագույն ֆուտբոլիստ Ռոնալդոյի (Ձախից) եւ ուժեղագույնների ցուցակում երկրորդը նշված Ռոբերտո Կարլոսի հետ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Օրվա հետքով

ՕԴԱՅԻՆ ՀԱՐԿ

Հայաստանն առաջ ընկավ ԱՊՀ մյուս երկրներից

Օդային տարածից օգտվելու համար նոր հարկի գանձումը պետք է սկսվեր անցած շաբաթ օրվանից, սակայն երկու օրով ուշացավ, քանի որ, ըստ «Ազատություն» ռադիոկայանի, օրենքում նշված է, որ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, իսկ հունվարի 10-ի կառավարության պաշտոնական տեղեկագրում օրենքը դեռ հրապարակված չէր: Այս անհարթությունը շուտափույթ հարթվեց, եւ այժմ օդային ուղիներով Հայաստանից մեկնելու համար արտոնությունից չօգտվող յուրաքանչյուր մարդ պետք է մուծի 10 հազար դրամ պետական տուրք: Սահմանված են 5 տեսակի արտոնություններ: Տուրքից ազատվում են մինչեւ 12 տարեկան երեխաները, տարանցիկ ուղեւորները, արտգործնախարարությունում հավատարմագրված միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները, դիվանագիտական անձնագրերով մեկնողները, Հայաստանում օտարերկրյա պետությունների դիվանագիտական եւ հյուպատոսական ներկայացուցչությունների աշխատակիցներն ու նրանց ընտանիքի անդամները, ինչպես նաեւ Հայաստանից մեկնող այն պաշտոնական անձինք եւ պատվիրակությունների անդամները, որոնք ժամանել էին հանրապետության նախագահի, Ազգ նախագահի, վարչապետի, ԱՊ նախագահի կամ արտգործնախարարի հրավերով:

Ֆինանսների նախարարությունում «Ազատություն» ռադիոկայանի թղթակցին հայտնել են, որ «օդային ելքի թույլտվություն» կոչվող պետական տուրքի այս տեսակը գործում է աշխարհի բազմաթիվ երկրներում: Դրույքաչափերը տարբեր են. 3 դոլարից սկսած մինչեւ 45 դոլար: ԱՊՀ երկրներում Հայաստանն առաջինն է, որ սկսեց կիրառել տուրքի այս տեսակը: Գանձումները, ինչպես բոլոր տուրքերն ու հարկերը, ուղղվում են պետբյուջե: Ֆինանսների նախարարության պետբյուջեի եկամուտների պլանավորման վարչության պետ Գագիկ Արզումանյանը «Ազատության» թղթակցին հայտնեց հետեւյալը: «Տուրքը վճարվում է յուրաքանչյուր ելքի համար, ինչպես ամբողջ աշխարհում: Այսինքն, ելքի յուրաքանչյուր դեպքի համար օդային ուղեւորը գրանցումից անմիջապես առաջ պետք է իր ձեռքի տակ ունենա պետական տուրքի վճարման անդորրագիրը»: Անդորրագիրն ուժի մեջ է 3 տարի: Եթե քաղաքացին չի օգտվել դրանից, արդա կարող է ներկայանալ Ֆինանսների նախարարություն եւ հետ ստանալ վճարված գումարը: Գագիկ Արզումանյանը հայտնել է, որ փաստացի վիճակագրությամբ 1998 թ. կլինի տարեկան 520 հազար ուղեւոր, որից 70 հազարը կօգտվի արտոնությունից եւ պետական տուրքի կմուծի տարեկան 450 հազարը: Այդ ուղեւորները 1998 թ. պետական բյուջե կմուծեն տարեկան 4,5 մլրդ դրամ, ինչը կկազմի պետբյուջեի ընթացիկ եկամուտների տարեկան 3,5-4 տոկոսը:

Այստեղ չենք ուզում կրկնել մեր թերթի էջերում նախապես արտահայտված տեսակետներն այս պահին օդային հարկի հաստատման նպատակահարմարության մասին: Սակայն ուզում ենք հարցականի տակ դնել այդ հարկի կամ տուրքի դրույքաչափը՝ 20 դոլար: Քաղաքացիների ո՞ր խավի կենսապայմաններին համապատասխանող դրույքաչափ է դա: Այն որոշողները ո՞ր երկրում են ապրում:

Բացի այդ, ինչո՞ւ է նոր տաղտուկ ստեղծվում ուղեւորության պատրաստվողի համար գնալ բանկ, մուծել, ժամանակ կորցնել կամ օդանավակայանում հերթ կանգնել ու վերցնել անդորրագիր: Մի՞թե չի կարելի ավիատոմսի գնի մեջ ներառել այն, կամ տոմսը գնելուց մուծել, ինչը կիրառվում է շատ երկրներում:

Կովկասյան կլան. Ռոստովում ձերբակալվել է Դեղ Խասան-Ասլան Ուսոյանը

Հանցավոր աշխարհը իր վաղուց ձեւավորված եւ հստակ գործող ենթակառուցվածքով միշտ էլ եղել է ամեն մի իշխանության հենարաններից մեկը: Յուրաքանչյուր նոր իշխանություն հայտնաբերում է գողերի նոր սերունդ, ում հետ ամուր սերտաճում է՝ բաժանելով ազդեցության հայտնի եւ անհայտ ոլորտները: Այսպես էր ԽՍՀՄ-ի օրոք, այսպես է այսօր: Հայաստանը նույնպես բացառություն չէ: Հայրենական նոր իշխանությունների ձեւավորումը զուգորդվեց հին հեղինակությունների կա՛մ ֆիզիկական ոչնչացմամբ, կա՛մ նրանց հետ բարդ պայմանագրերի կնքմամբ: Որոշ մասն էլ ստիպված եղավ լքել հայրենիքը եւ շարունակել դրամի նոր կոզիներ հայտնագործել արտաշխարհում:

Նմանատիպ գործընթացներ վերջին տարիներին նկատվում էին նաեւ հարեւան հանրապետություններում քաղաքական նմանատիպ փոփոխությունների թելադրանքով: Մակերեւույթին ինչ-ինչ կերպ մնացած հեղինակությունները ստիպված եղան ձեւավորել գողերի կովկասի կլան, փորձելով գտնել կայուն ու վստահելի ճիման եզրեր, ինչպես Դաշնային Ռուսաստանի իշխանությունների, այդպես էլ նոր ձեւավորվող կլանների հետ:

Այնուամենայնիվ, փաստն այն է, որ նոր հասարակարգը ծնում է նոր հերոսներ: Սրանով է նաեւ բացատրվում հին հեղինակությունների հաջորդաբար վերացումը եւ իրենց «լրտեսային գործունեության» մերկացումը: 1998-ի հունվարի 11-ին, ՈԴ Ռոստովի մարզում, դաշնային ոստիկանությունը իրականացրեց աննախադեպ մի որս, որի ընթացքում նախնական կալանքի ենթարկվեցին ավելի քան 100 հեղինակություններ, որոնցից 40-ը թագադիր գողեր էին: Նրանք այսպես կոչված Կովկասի կլանի ավագ սերնդի հայտնի ներկայացուցիչներն են Ասլան Ուսոյանի գլխավորությամբ: 60-ամյա հեղինակությունը (մականունը՝ Դեղ Խասան), հավատ էր կազմակերպել մարզի Շախտի քաղաքում կլանի հետագա ռազմավարությունը պարզելու ակնկալիքով:

Ենթադրվում է, որ որսի նման հաջողությունը պայմանավորված է ոչ այնքան ոստիկանության գործունեությամբ, որքան նույն կովկասյան կլանի ներսում առկա հակասություններով: Կլանի հին եւ նոր սերունդները ընդհանուր չեն եկել ազդեցության ոլորտների բաժանման հարցում. պատահական չէ, որ հունվարի 11-ի «սխոդկայում» չի եղել կլանի նոր սերնդի ոչ մի ներկայացուցիչ: Նոր սերնդի առաջնորդները նույնպես հայազգի են՝ Օգանով եղբայրները: Համածայն որոշ աղբյուրների, Ասլան Ուսոյանին ոստիկանությանն են հանձնել հենց Օգանովները:

ԱՐԻՍ ՂԱԶԱՐՅԱՆ

ԱԴՐԲԵՋԱՆ

Նախկին խոսնակ Ռասուլ Գուլիեւն էլ դարձավ պետական հանցագործ

15 ՀՈՒՆՎԱՐ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»: Ադրբեջանի խորհրդարանի՝ Միլլի մեջլիսի նախկին խոսնակ Ռասուլ Գուլիեւը իրավապահ մարմինների կողմից մեղադրվեց հանրապետության նախագահի դեմ ահաբեկչական գործողությունների նախապատրաստման մեջ: Ներքին գործերի, Ազգային անվտանգության նախարարությունների եւ գլխավոր դատախազության այսօր տարածած համատեղ հաղորդագրության մեջ նշվում է, որ Գուլիեւը, որը ներկայումս հանրապետություն սահմաններից դուրս է գտնվում, գաղտնի հանդիպումներ է ունենում «Ադրբեջանի, ինչպես նաեւ Թուրքիայի եւ այլ պետությունների քաղաքացի որոշ անձանց հետ: Այդ հանդիպումների ընթացքում, ասվում է հաղորդագրության մեջ, քննարկվում են երկրի ներքին քաղաքական իրադրության ապակայունացման, վարձու մարդասպանների պատրաստման, ահաբեկչական խմբավորումների կազմակերպման հարցերը»: Նույն հաղորդագրության համաձայն, սկսվել է նախկին խոսնակի անձնական եկամուտների աղբյուրների հետաքննումը: Գուլիեւի անձնական ունեցվածքը, ըստ օտարերկրյա մի շարք պարբերականների, կազմում է մի քանի հարյուր միլիոն դոլար: Ռասուլ Գուլիեւը գլխավորել է Ադրբեջանի խորհրդարանը մինչեւ 1996 թվականը: Այնուհետեւ հրաժարական է տվել առողջական վիճակի պատճառով եւ, ինչպես այն ժամանակ էր հաղորդվել, մեկնել է Ադրբեջանից բուժվելու նպատակով:

Բագրատաշենի տուկան դեռեւս փակ է

«ԵՐԵՎԱՆ», 14-ՀՈՒՆՎԱՐ 1998: Ինչպես արդեն հայտնել ենք, հունվարի 6-ից Բագրատաշենի սահմանամերձ տուկայի եւ Վրաստանի Սադախլո բնակավայրի միջեւ սահման հանդիսացող կամուրջը փակ է: Հունվարի 13-ին Սադախլոյի բնակիչները, որոնք պորում են շնորհիվ սահմանային առեւտրի, իբրեւ բողոքի նշան շուրջ երեք ժամ փակել են Վրաստանից Հայաստան մտնող ավտոճանապարհը: Շուկայի բացման հետ կապված խնդիրներ են ծնունդ առել նույն օրվա երկրորդ կեսին Վրաստանի Քվեբո-Քարքիի նահանգապետ Լեւան Մամալաձեի եւ Տավուշի մարզպետ Պավել Ասատրյանի՝ Բագրատաշենում կայացած հանդիպման ժամանակ:

Հունվարի 14-ի կեսօրվա դրությամբ տուկայի եւ Սադախլոյի միջեւ սահմանը շարունակում էր փակ մնալ: Տարօրինակն այն է, որ սահմանը փակելու մասին որեւէ որոշում գոյություն չունի, եւ ամեն ինչ արվել է բանավոր ցուցումով: Հավանական է այն վարկածը, որ երեւանում հզոր հովանավորներ ունեցող առեւտրական խմբերը կուսակել են մեծ խանգությամբ պորանները: Փակելով Բագրատաշենի տուկան՝ նրանք հնարավորություն կստանան վաճառելու իրենց կուսակածը:

ADANA
COMMERCIAL BANK

ԻՆՉՊԵՍ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼ ՀԱՅԱՍՏԱՆ

«Ադանա» բանկը հայտարարում է Հայաստան շտապ փոխանցումներ կատարելու ասպարեզում ծառայությունների ոլորտի ընդլայնման մասին: Արտահերթ 24 ժամվա ընթացքում ձեզ կարող են փոխանցումներ կատարել աշխարհի ցանկացած կետից եւ գործնականորեն Ռուսաստանի բոլոր տարածաշրջաններից՝ «Ադանա» բանկի, «Կրեդիտ-Մոսկվա» բանկի եւ Ռուսաստանի Արտաքին առեւտրի բանկի (Վնեշտորգբանկ) մասնաճյուղերի թղթակցական ցանցի միջոցով:

Մոսկվայից եւ Սանկտ Պետերբուրգից դրամական փոխանցումների իրականացման տոկոսադրույքը՝ 1%: Ռուսաստանի տարածքաշրջաններից տոկոսադրույքը՝ 1% կամ առնվազն 10 դոլար:

Ձեզ սպասում ենք հետեւյալ հասցեներով՝

Մոսկվայում՝ «Կրեդիտ-Մոսկվա» ԲԱԲ
Մոնետչիկովսկի 6-րդ նրբանցք, 8 (մետրոյի «Պավելեցկայա» կայարան): Հեռ. 237-55-93, 233-42-43
Սանկտ Պետերբուրգում՝ «Կրեդիտ-Մոսկվա», «Սանկտ-Պետերբուրգսկի» մասնաճյուղ
Սադովայա փող., 54 (մետրոյի «Սադովայա» կայարան):
Հեռ. 310-19-67, 310-13-69
Երեւանում՝ «Ադանա» բանկ
Հայաստանի Հանրապետություն, Երեւան, Նալբանդյան 5:
Հեռ./Ֆաքս՝ +(885)39 07157, +(885) 2 585980
Տելեքս՝ (64) 243340 ADANA SU

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԲԱՆԿԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ

Սանկտ-Պետերբուրգ, Բոլշայա Մորսկայա փ. 29	հեռ. (812)	312-78-00
Բլագովեշչենսկ, Սովետսկիյ նրբ. 65/1	հեռ. (4162)	42-10-47
Խաբարովսկ, Սոսկովսկայա փ. 7	հեռ. (4212)	33-58-13
Վիբորգ, Կրեպոստնայա փ. 16	հեռ. (81278)	2-53-02
Նախոդկա, Շկոլնայա փ. 19	հեռ. (42366)	4-69-71
Նովոռոսիյսկ, Սովետների փ. 47	հեռ. (86134)	5-74-14
Սոչի, Կարլ Լիբկնեխտի փ. 10	հեռ. (8622)	92-73-35
Կրասնոյարսկ, Լենինի փ. 143	հեռ. (3912)	21-85-29
Իրկուտսկ, Սվերդլովի փ. 40	հեռ. (3952)	24-16-72
Ստավրոպոլ, Կոմինտերնի փ. 7	հեռ. (8652)	26-17-54
Կալինինգրադ, Բոլնիչնայա փ. 5	հեռ. (0112)	34-05-00

Ուզո՞ւմ եք նիհարել մեկընդմիտ

Զանգահարեք *27-10-21*,
ժամը *17-ից*:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆ
ԱՂՋԻԿՆԵՐ
(18-25 տարեկան)
ռուսերենի եւ հայերենի լավ իմացությամբ:
Դիմել՝ Իսահակյան 35 (Հայնիկեն սրճարանի I հարկում):

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
առանձնատուն, 80 քառ. մ նկուղ ավտոտնակով եւ երկու բնակելի հարկով (առանց ներքին հարդարանքի), «Զվարթնոց» կինոթատրոնի մոտակայքում (Մոնումենտ): Կա նաեւ մրգատու ծառերով փոքրիկ այգի:
Զանգահարել՝ 27 22 57 ժամը՝ 10-16, 58 33 26 ժամը՝ 18-23

«Ազատ Հայք առաքելություն» կազմակերպության կոչը
Միայն հացով չի ապրի մարդը...
Հայ առաքելական սուրբ եկեղեցու հայրապետական օրհնությամբ Երեւանի Էրեբունու համայնքում եկեղեցի է կառուցվում:
Աստվածահաճո այս ձեռնարկությանը մասնակցելու պատրաստակամ հավատացյալ ազգը կարող է ներդրում ունենալ...
ՀՀԿԲ հ. հաշիվ 103004230076

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
3 սենյականոց բնակարան: Հասցեն՝ Վերին Շենգավիթ, 2-րդ փողոց, 3 ս., բն. 33, հեռ. *44-47-31*
(«Հայրենիք» կինոթատրոնի մոտ):

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
2 սենյականոց բնակարան, Ֆրունզեի փ. տեսք 6, 34 բն., 5 հարկանի տեսքի 5-րդ հարկում:
Հեռ՝ 44-97-40, 58-18-41
(«Հայրենիք» կինոթատրոնի մոտ):

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
հայտարարում է մրցութային ընդունելություն
անվտանգության աշխատակցի եւ փոստային գրասենյակի աշխատակցի թափուր տեղերի համար: Պահանջվում է անգլերենի իմացություն, նմանատիպ աշխատանքի փորձ: Շարունակվում է նաեւ մրցույթը կոմերցիոն գծով օգնականի թափուր տեղի համար: Պահանջվում է նմանատիպ աշխատանքի երկարատեւ փորձ եւ անգլերենի լավ իմացություն:
Դիմել Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանություն.
Բաղրամյան 18, կադրերի բաժին:
Հեռ. 52-46-61, 52-16-11 միջեւ հոկտեմբերի 23-ը:

«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
հեռախոսով (589167, 581351) - պարբերաբար հրատարակվող տեղեկագրերով - մագնիսական սկավառակներով - INTERNET ցանցով (http://www.arminco.com/spyur)

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան. Երեւան-23, Արշակունեաց 2. Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Պատուեր 739. Տպաքանակը՝ 3000. Ստորագրված է տպագրության՝ 15. 01. 1998. Գինը՝ 100 դրամ

digitised by A.R.A.R.@